

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

مارزیک

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمنتمن ببيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԸ ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 2 (320) VOL. XXVIII N° 2 السنة الثامنة والعشرون - العدد الثاني



ARMENIA

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ը
ԱՆՑՆՈՂ ԵՐԿՈՒ
ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

ԵՐԵՒԱՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅԻՐ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ

Այս ամառ, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ուշադրությունը սեւեռած պիտի ըլլայ մայր հայրենիք՝ Հայաստան, ուր 1-8 Օգոստոս 2009ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Կարչութեան կազմակերպութեամբ տեղի պիտի ունենան համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ մարզախաղերը. ֆուսպոլ, պասքեթպոլ, լող, փինկ-փոնկ եւ ծատրակ:

Մարզախաղերուն բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 1 Օգոստոսին: Չորեքշաբթի, 5 Օգոստոսին, բոլոր մասնակիցները պիտի մեկնին Սեւանայ լիճ: Օր մը ետք, անոնք ներկայ պիտի գտնուին մարզիկներու դաստիարակչական յատուկ ծրագիրին, որմէ ետք յարգանքի իրենց տուրքը պիտի մատուցանեն Սեծ Եղեռնի զոհերուն՝ այցելութիւն մը տալով Ծիծեռնակաբերդ:

Շաբաթ, 8 Օգոստոսին, տեղի պիտի ունենան պասքեթպոլի եւ ֆուսպոլի արարտական մրցումները, որոնց պիտի յաջորդէ բաժակներու եւ մետալներու տուչութիւնը: Նոյն օրը, երեկոյեան, բոլոր մասնակիցները դարձեալ պիտի համախմբուին՝ ներկայ գտնուելու համար Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսին:

Մարզախաղերուն մասնակցութեան համար տարիքային սահմանափակում չկայ: Միայն պասքեթպոլի կրտսերներու մրցաշարքին մասնակցողներուն տարիքը պէտք է ըլլայ 1991ի ծնունդ կամ արեւի փոքր:

Խորաքանջիւր մարզածելի համար մասնակիցներուն արտօնուած թիւերը հետեւեալներն են.-

Ֆուսպոլ- 15էն 18 մարզիկ, 1 մարզիչ եւ 1 մարզիչի օգնական կամ վարչական ներկայացուցիչ:

Պասքեթպոլ- 10էն 12 մարզիկ, 1 մարզիչ եւ 1 մարզիչի օգնական կամ վարչական ներկայացուցիչ:

Փինկ-փոնկ- Անհատական մրցումներու համար մասնակիցներու թիւի սահմանափակում չկայ: Մասնակիցներուն կրնան ընկերակցիլ 1 մարզիչ եւ 1 մարզիչի օգնական կամ վարչական ներկայացուցիչ:

Լող- Մասնակիցներու թիւի սահմանափակում չկայ: Մասնակիցներուն կրնայ ընկերակցիլ 1 մարզիչ կամ վարչական ներկայացուցիչ:

Ծատրակ- Մասնակիցներու թիւի սահմանափակում չկայ: Մասնակիցներուն կրնայ ընկերակցիլ 1 մարզիչ կամ վարչական ներկայացուցիչ:

Մարզախաղերը պիտի սկսին Կիրակի, 2 Օգոստոսի առաւօտեան: Ֆուսպոլի եւ պասքեթպոլի պարագային, մրցաշարքերու նախօրեակին՝ Շաբաթ, 1 Օգոստոսի յետմիջօրէի ժամը 3ին, կազմակերպիչ

յանձնախումբը տեղեկութիւններու փոխանցման հանդիպում մը պիտի ունենայ բոլոր պատասխանատուներուն հետ: Հանդիպման ընթացքին պիտի բաժնուին տեղեկութիւններու յատուկ գրքոյկներ. լուսաբանութիւններ պիտի տրուին եւ տեղի պիտի ունենայ վիճակածգութիւն՝ որոշելու համար խումբերու մրցակիցները:

Յայտնենք, որ իւրաքանչիւր շրջանի մասնակցութեան սակին մէջ ներառնուած է պատուիրակութեան փոխադրութեան սակը օդակայանէն պանդոկ: Խմբային սակերէ անկախ, իւրաքանչիւր մարզիկ, մարզիչ կամ ներկայացուցիչ, պիտի վճարէ նաեւ անհատական մասնակցութեան սակ, որ պիտի ներառնէ հետեւեալները.-

● Ժամանումի օրը փոխադրութիւն օդակայանէն պանդոկ:

● 1 Օգոստոսէն 9 Օգոստոսի առաւօտ, պանդոկի կեցութիւն:

● Թեթեւ ընթրիք մը բացման հանդիսութենէն առաջ:

● Նախաճաշ, ամէն օր, մասնակիցին իջեւանած պանդոկին մէջ:

● 7օրեայ ճաշ (2էն 8 Օգոստոս):

● Մուտքի տոմս Յաղթանակի ճաշկերոյթ-Պարահանդէսի:

● Պանդոկներէն փոխադրութիւն դէպի զանազան մարզադաշտեր:

● Փոխադրութիւն եւ ճաշ 5 Օգոստոսին տեղի ունենալիք Սեւանայ լիճի շրջապտոյտին:

● Սեկնումի օրը փոխադրութիւն պանդոկէն օդակայան, միայն խումբերու համար եւ մինչեւ 11 Օգոստոս:


Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ մարզախաղերուն համար վերապահուած են երեք պանդոկներ՝ «Անի», «Արմենիա-Մարիոթ» եւ «Քոնկրէս»: Խումբերը պիտի իջեւանին յիշեալ պանդոկներէն մէկուն մէջ, ըստ խումբի անդամներու թիւին, կեցութեան ժամանակամիջոցին եւ այն:

Այլ անհատներ, բացի մարզիկներէ, մասնակիցներէ, պատասխանատուներէ եւ իրենց կին-ամուսին-բարեկամներէ, որոնք կը փափաքին Հայաստան մեկնիլ խաղերու ընթացքին եւ կեցութիւն հաստատել խումբերուն հետ, կրնան կապ պահել համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ մարզախաղերու պաշտօնական ծամբորդական գրասենեակին հետ.- հեռ. 00-1-888-450-9177, Ե-նամակ.- e-mail: anniekol@yahoo.com



ԹԻՒԿԻՆ ՆԻՒԹԵՐՈՒ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعية الهولمتن الریاضية



Մարզական ամսաթերթ
 Հրատարակությունը Հ.Մ.Ը.Մ.Ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԱՆ

ԻԸ. ՏԱՐԻ, 2009, ԹԻ 2 (320)



3

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Ակնարկ 7
- Պատմություն 10
- Մեր Տեսակցությունները 16
- Մասնաձիղէ Մասնաձիղ 21
- Մեր Կորուստները 36



30



27

ՔԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 19
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Լինոնի եւ Ջարեհ Սարմազ-
 Եաններ (Քւնալիճ) 1000\$

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան
 «ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աբօ Մոսիկեան
 Գօգօ Մկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Գրիգոր Շահինեան, Ներսէս Արք.
 Բախտիկեան, Սամուէլ Մկրտիչեան,
 Գէորգ Թորոյեան, Գէորգ
 Գարապոյաճեան, Սալբի Լատոյեան
 եւ շրջաններու թղթակիցներ:
 Էշադրում - Ջարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Ծինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.Ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 35000 Լ.Ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ս Տ Ն Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ն Ե Ր Ո Ւ Մ Ի Մ Ե Ծ Ո Ւ Ն Ե Ր Ո Ւ Մ

ԱԿՄԻՎԱՇԻՆՈՒԹԻՒՆ

Օրը նոր՝ կարիքները նոր:

Անցնող տասնամեակներուն շատ բան փոխուեցաւ հայ կեանքին մէջ: Միջին Արեւելեան մեր գաղութներէն մեծաթիւ հայեր հաստատուեցան արեւմրտեան ոստաններ: Մ. Նահանգներ եւ Եւրոպա հիւրընկալեցին Յայաստանէն արտագաղթած հայորդիներու պատկառելի թիւ մը: Նոյնը կարելի է ըսել նախկին Խ. Միութեան երկիրներու՝ Ռուսիոյ, Ուքրանիոյ եւ Կեդրոնական Ասիոյ հանրապետութիւններուն համար, ուր ստեղծուեցան հայկական ստուար գաղութներ: Յայութիւնը ցրուեցաւ քիչ մը ամէն տեղ: Իսկ ցրուիլը ձուլուիլ է մեզի համար, եթէ չեն ապահովուած հայ մնալու երաշխիքները՝ դպրոցը, եկեղեցին եւ ակումբը:

Բնականօրէն, հայ կեանքի տեղաբաշխական նոր պատկերը ստեղծեց նոր դժուարութիւններ, որոնց յաղթահարման համար իր մասնակցութիւնը բերաւ ու կը շարունակէ բերել Հ.Ս.Ը.Մ., իր ուժերուն առաւելագոյն լարումով:

Կը բաւէ արագ աչք մը նետել միութեան վերջին շրջանի գործունէութեան վրայ, տեսնելու համար, թէ Հ.Ս.Ը.Մ. ի՞նչ ըրաւ հասնելու համար հայութեան ցրուած զանգուածներուն: Հ.Ս.Ը.Մ. վերակենդանացուց Պուլկարիոյ իր երբեմնի մասնաճիւղերը, արմատ նետեց Յունգարիոյ մէջ եւ մասնաճիւղ մըն ալ հիմնեց Մոսկուայի մէջ: Արեւմտեան կողմն աշխարհի, միութեան Մ. Նահանգներու մասնաճիւղերուն թիւր գրեթէ կրկնապատկուեցաւ, Լոնտոնի, Փարիզի եւ Վիեննայի մասնաճիւղերը ապրեցան զգալի աշխուժութիւն, իսկ նոր մասնաճիւղեր հիմնուեցան Ալմէլոյի (Յոլանտա) եւ Շուէտի մէջ:

Յայրենիքի մէջ, Հ.Ս.Ը.Մ. հասաւ հո՞ն, ուր կարիքը զգացուեցաւ: Ան մասնաճիւղեր եւ սկաուտական միաւորներ ստեղծեց Յայաստանի եւ Ջաւախքի մեծ ու փոքր քաղաքներուն մէջ:

Կազմակերպչական այս իրագործումները, սակայն, իրենց լրումին չհասան եւ Հ.Ս.Ը.Մ.ի գործունէութիւնը ակըն-

կալուած արդիւնաւորումը չունեցաւ շարք մը պատճառներով, որոնց կարեւորագոյնը անհրաժեշտ ակումբներու չգոյութիւնն էր յիշեալ շրջաններուն մէջ: Հ.Ս.Ը.Մ. ունեցաւ մասնաճիւղեր, որոնք երկար տարիներ գործեցին օտար կեդրոններու մէջ, վարձքերու ահաւոր բեռան տակ կրած: Եղան մասնաճիւղեր, որոնց աշխատանքը սահմանափակուեցաւ Յայ Կեդրոնի մը սենեակներէն մէկուն մէջ: Եղան նաեւ անոնք, որոնք վարչական գրասենեակ մը նոյնիսկ չունեցան. ժողովները գումարեցին անդամներու տուններուն մէջ: Հ.Ս.Ը.Մ. մարզական խումբեր ունեցաւ առանց ակումբի դաշտ ունենալու, սկաուտական շարքեր պահեց՝ առանց ակմբային յարմարութիւններ ունենալու:

Այսօր, միութիւնը կանգնած է մեծ մարտահրաւերի դիմաց. ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որպէսզի Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղերը ունենան օրուան պահանջներուն գոհացում տուող ակումբներ՝ ազգային-միութենական իրենց գործը լաւագոյնս յառաջ տանելու համար:

Հ.Ս.Ը.Մ.ի իւրաքանչիւր մասնաճիւղ արժանի է ունենալու իր ակումբը, որուն համար ալ միութիւնը այսօր իր աչքերը կը յառէ այն ժողովուրդին, որմէ ծնաւ ինք եւ որուն նուիրաբերեց իր բոլոր ուժերը անցնող 90 տարիներուն:

Ակմբաշինութիւնը օրուան կարգախօսն է: Այլեւս կարելի չէ Հ.Ս.Ը.Մ.էն շատ բան պահանջել՝ փոխարէնը ոչինչ տալով անոր: Հ.Ս.Ը.Մ. այսօր իր հարազատ ծնողքին՝ հայ ժողովուրդին դիմաց դրած է սեփական ակումբ ունենալու պահանջը, որ ո՛չ պերճանք է եւ ոչ ալ անտեղի ծգտում, այլ՝ կեանքի եւ պայմաններու հրամայական անհրաժեշտութեան արդիւնք:

Ազգովին պէտք է միջոցներ որոնել ակմբաշինութեան համար: Գէթ պէտք է սկսիլ լրջօրէն մտածել այդ գծով: Մտածել մեր ժողովուրդի եւ Հ.Ս.Ը.Մ.ի ներկային ու ապագային մասին: Մտածել ու ձեռնարկել այսօր, որովհետեւ ապագան կը սկսի այսօր:

ԳԱՅԼԻԿՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ




15 Փետրուար 2009ին, Պէյրուֆի մէջ մահացաւ վաստակաւոր մանկավարժ, մշակութային գործիչ, գրականագէտ եւ գրաքննադատ Գրիգոր Շահինեան, որ պատանեկութեան եւ երիտասարդութեան եղած է Յ.Մ.Ը.Մ.ական եւ միութեան ժառանգած է արժէքաւոր գրքոյկ մը՝ «Գայլիկներու աշխարհէն», տպուած՝ 1949ին, Պէյրուֆ:

Շահինեան իր գրքոյկին նախաբանին մէջ կը հաստատէ, որ «Ազդակ Շաբաթօրեակ»ին մէջ տպուած յօդուածաշարքէ եւ քանի մը անտիպ էջերէ կազմուած այս գրքոյկը յաւակնութիւնը չունի գայլիկներու շարժումը իր ամբողջութեան մէջ ներկայացնելու: Եղածը փորձ մըն է անձնական տպաւորութիւններ տալու՝ «Գայլիկներու աշխարհէն»:

«Գայլիկներու աշխարհէն»ը հրապարակէն շատոնց սպառած գրքոյկ մըն է, որ կը բաղկանայ 10 մասէ. «Շարժումին պատմականը», «Գայլիկութեան էութիւնը», «Հրաշապատում եւ խորհուրդ», «Վոհմակի կազմակերպութիւնը», «Զգացումը գայլիկներու մօտ», «Գայլիկներու բարոյական կրթութիւնը», «Աչքն ու ականջը՝ բաց», «Արթուն եւ ժպտուն...», «Գայլիկութիւնը՝ ազգապահպանումի միջոց» եւ «Վոհմակի մթնոլորտ»:

Ի յիշատակ Գրիգոր Շահինեան մարդուն, ազգային նուիրեալին եւ Յ.Մ.Ը.Մ.ականին, եւ ի յարգանք իր հայանուէր վաստակին, «Մարզիկ» կը ներկայացնէ յիշեալ գրքոյկէն երկու մաս:



Եթէ գայլիկութիւնը այնքան լաւ կը համապատասխանէ տղոց ծագումներուն՝ պատճառը այն է, որ յարմարած է հոգեբանութեան բնական օրէնքներուն:

Vera C. Barclay



ուրջ 35 տարիներու գայլիկութեան արդիւնաւոր գործունէութիւնը փաստ մըն է, թէ առողջ է դաստիարակութեան ընդհանուր ձեւը, որ որդեգրուած է այս շարժումը ղեկավարողներուն կողմէ:

Մանկավարժական հիմնարկութիւններ, ծանրագլուխ եւ աւանդապաշտ մանկավարժներ իսկ ճանչցած են դաստիարակչական արժէքը գայլիկութեան, եւ գնահատած: Ու հիմա, սկստուածութեան պատրաստող այս դպրոցը մանկավարժական ծանօթ հիմնարկ մըն է այլեւս:

Գայլիկութիւնը կը պատրաստէ տղան սկստուալ ըլլալու կը պատրաստէ հետեւաբար կեանքին, որովհետեւ սկստուածութիւնը կեանքն իսկ է, ինչպէս կը վկայէ մանկավարժ անգլուհի մը, այնքան խոր գիտակցութեամբ: Կեանքի պայքարին գինը կը հասցնող այս կազմակերպութիւնը ինքնայատուկ ձեւ մը պիտի ունենար անշուշտ, գրաւիչ ու դաստիարակիչ միանգամայն, որ ղիթէր հոգին խաղով ու գուարճութեամբ յաճախ տարուած տասնամեայ մանուկին:

Գայլիկութիւնը ունեցաւ ղիթեկան այդ ձեւը եւ անով իսկ

տարաւ իր այնքան փայլուն յաղթանակը: Այս կազմակերպութեան յաջողութեան գաղտնիքը հոն է անկասկած, որ առանց խոշոր բաներ առաջադրելու, կը հասնի լուրջ արդիւնքներու՝ խաղով, պարով ու հաճոյքով:

Առաջին ակնարկով, ոչ մէկ հիմնական ձեւ այս կազմակերպութեան ներս: Բայց խորանալէ ետք քննութեան մէջ, տեսնել գիտցող ամէն մարդ կը նկատէ, որ իսկապէս հանճարեղ է յղացումն ու սկզբունքը այս շարժումին:

Անմահ մեր հիմնադիրը, խորապէս ծանօթ մանուկներու հոգին՝ հասկցած է, թէ պզտիկը մանկապարտէզի մը անկիւնը խիճերու վրայ ծունկի գալով չէ որ կը կրթուի, ոչ ալ ուսուցիչէն վախցած՝ դժուար դաս մը սորվելով: Ան գիտցած է գայլիկներու դժուար դաստիարակութիւնը դարձնել իսկական հաճոյք մը թէ՛ կրթուողին եւ թէ՛ կրթողին համար: Այսպէս, գայլիկութիւնը խաղ ու պար է դուրսէն դիտողին, եւ հաճոյք՝ գայլիկին համար: Բայց բարոյական ու մարմնական կրթութեան վառարան մը միաժամանակ, երբ կը քննենք հուլիսները շարժումին:

Ընդհանուր կարգ մը միջոցներէ գատ, տղաները կրթելու գործին մանրամասնութիւնները ձգուած են վոհմակի պատասխանատուներուն, առանց կրթական միօրինակ ծրագիրի մը տաղտուկին: Եւ լա՛ւ է այսպէս: Մանուկներու աշխարհէն ներս ամէն անհատ օրէնք մըն է ինքն իրեն համար, եւ յաճախ բացառութիւն՝ ընդհանուր կարծուած կանոններու: այնպէս որ՝ գիտակից պատասխանատուն կը պարտաւորուի իւրաքանչիւր պզտիկի հոգեկան ու մարմնական պահանջներուն



յարմարող առանձին ձեռք մը գտնելու: Հոսկէ ալ գայիկներու աշխարհը կը դառնայ ամբողջութիւն մը իրարմէ անջատ, բայց հոգեկան սերտ կապով մը իրարու միացած վոհմակներու, ուր Աքեյլաները կեդրոնացած կազմակերպութեամբ մը կը վարեն գործերը՝ հետաքրքրուելով ամէն մէկ գայիկով առանձին:

Բայց եթէ այսօր միայն ըլլար արժանիքը գայիկներու կազմակերպութեան՝ քիչ նպաստ բերած պիտի ըլլար ան մարդերուն, քանի գիտակից ամէն ընտանիք նոյն ձեռքն է որ կը դիմէ՝ գաւակներու կրթութեան գործին մէջ:

Բարեբախտաբար, մեր հիմնադիրը չէ գոհացած այսօրուով եւ այս նոր կազմակերպութիւնը դարձուցած է արդիական իրական հիմնարկ մը մանուկներու կրթութեան համար: Դրած է հոն սկզբունքներ, որ կը մղեն գայիկը ո՛չ միայն հետեւելու իր գաստիարակներու խորհուրդին, այլ՝ մինչեւ իսկ գաստիարակելու ինքն իրեն նախ, ապա իր ընկերները: Ինքնաթիւյադրութեան իրական ձեռքն է կիրարկուածը. այն բոլոր գիտելիքները որ կը սորվի գայիկը հետաքրքրութեամբ նոր բարձունքի մը հասնելու համար, կը պարտադրեն իրեն սորվեցնելու նոյն բաները ուրիշին: Այնպէս որ, բարոյական մասնաւոր խրատներ ակամայօրէն կրկնելով՝ կը սկսի նաեւ անոնց իրագործումին, նախ անգիտակից, բայց յետոյ գիտակից ձեռով: Երբ, օրինակ, ամբողջ տարիներ գայիկը կը կրկնէ սահմանական եղանակով եւ վճռական՝ դաւանանքը, նախ իրեն, ապա ուրիշներուն համար, բնականօրէն անոր ոգին կը ներգործէ իր մէջ: Եւ արդէն այնպիսի ձեռով մը ըսուած են դաւանանքին բառերը, որ ինքնին յարմար են ինքնաթիւյադրութեան օրէնքներուն:

Գայիկը միշտ մտիկ կ'ընէ ծեր գայլը, ան բնաւ ինքզինքը մտիկ չ'ընէր:

«Ոչ հրահանգ է տրուածը, ոչ ալ արգելք՝ որոշ

բան մը ընելու. այլ հաստատում մը, սքանչելի եւ վճռական միաժամանակ, որ ոչ մէկ տեղ կը ձգէ հակաճառութեան եւ կը պահանջէ որ գայիկը հասնի բանաձեւի բարձրութեան»:

Դեռ այս չէ բոլորը:

Գայիկութիւնը ունի ուրիշ մանր «գաղտնիքներ» ալ, որոնք սքանչելի արդիւնքներ կու տան ուղղակի:

Առաջին կարգին՝ համագգեստը:

Համագգեստը գրաւիչ փորձութիւն է գայիկին համար եւ միաժամանակ վճռական արգելք՝ զէջ արարքներ ընելու: Նախ կայ հրապուրանքը կապոյտ տարատիւն, կանաչ շապիկին, փողկապին. կայ աղուոր, խելօք մետաղեայ գայիկ քաշողութիւնը՝ կաշիէ գօտիին վրայէն. բայց անգամ մը որ տիրացաւ նորեկը համագգեստին՝ կը ծնին արգելքները: «տարագով հեծիկ պիտի չըջես, տարագով շարժապատկերի պիտի չերթաս, տարագով խելօք պիտի ըլլաս, տարագով... չէ չվերջացաւ. պէտք է փողկապիդ վարի հանգոյցը քակես եւ ատոր համար ընես բարիք մը ամէն օր»:

Այս է տարագը. ասկէ աւելին է տակաւին, բայց ամէն բան չէ. ուրիշ «խաղեր» ալ ունի դեռ գայիկութիւնը:

Կայ բանակումը, արշաւը, երգը, պարը, խաղը, կամ ամբողջ արարողութիւնները վոհմակին, այնքան խորհրդաւոր, բայց այնքան պարզ, կան վեցեակային մրցումները, կայ ժապակէն շահիլը, կայ վերջապէս սէրն ու գնահատանքը մեծին: Եւ պատիկները, եւ բոլոր պատիկները, այնքան կը սիրեն այս ամէնը:

Ձգեցէք ուրեմն որ անոնք գան մեզի, գան գայիկներուն, գան կեանքին ու յաւիտենութեան, որովհետեւ 12 տարեկանէն վերջ գայիկութիւնը տղուն մէջ յամեցող առաքինութիւններու գումարն է, որ կը մղէ ան քրիստոնէական հաւատքին եւ Աստուծոյ: Չէ՞ որ երկինքի թագաւորութիւնը անմեղներուն է վերապահուած: Գայիկութիւնը ճամբան է այդ արքայութեան:



ԳԱՅԼԻԿՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԻ ՄԻՋՈՑ

Գայլիկութեան ունեցած առաւելութիւններուն վրայ հատ մը եւս կը գումարուի, եթէ մօտենանք այս շարժումին՝ ազգային կրթութեան տեսակէտէն:

Ներկայ հայապահպանումի պայքարին մէջ գայլիկութիւնը - սկստութեան հետ անշուշտ - կրնայ լաւագոյն զէնքերէն մէկը ըլլալ յաղթանակը ապահովող:

Կասկած չկայ, որ եթէ կ'ուզենք հայեցի կրթութեամբ սնած առողջ սերունդներ հասցնել՝ պէտք է սկսինք անոնց ազգային դաստիարակութիւնը պզտիկութենէն: Արդ, գայլիկութիւնը այն կազմակերպութիւնն է, որ կրնայ, առանց իր սկզբունքները խաթարելու, ներարկել 7-12 տարեկան պզտիկին ազգային գիտակցութեան տարրերը՝ հետագային գիտակից հայ մը ունենալու մտահոգութեամբ: Անշուշտ, կան ուրիշ հաստատութիւններ ալ մեր իրականութեան մէջ, որոնք կրնան նման դեր մը ստանձնել, բայց պէտք է ընդունինք, որ ինչ ալ ըլլան պայմանները՝ գայլիկութեան տուած դաստիարակութիւնը կ'ըլլայ աւելի առողջ եւ աւելի հայեցի: Ասոր պատճառը պէտք է փնտռել մեր շարժումին էութեան մէջ:

Մանկավարժական լուրջ կազմակերպութիւն որպէս, գայլիկութիւնը հեռու է ամէն ձեւի հատուածական քարոզչութիւններէ:

7-12 տարեկան մանուկներու մէջ չէ որ քաղաքական դաստիարակութիւն պիտի փորձուէր: Ասոր համար, ահա, վոհմակի կրթութիւնը կամաւոր կերպով կը հետեւի լո՛կ ազգային ուղեգիծի՝ նպատակ ունենալով ամէն բանէ առաջ մաքուր ու ազատ պահել տղաներու հոգին, ձգելով իրենց ազատ կամքին՝ հետագային որեւէ հոսանքի պատկանելու որոշումը: Ճիշդ է, կրնայ այս ուղեգիծը փոխուիլ՝ համաձայն այն գաղափարներուն, որոնցմով կ'առաջնորդուին վոհմակի մը ղեկավարները, բայց սխալ կ'ըլլայ նման ուղղութիւն մը, ղեռ աւելին՝ կ'ըլլայ տեսակ մը գողութիւն: Ոչ ոք իրաւունք ունի գողնալու պզտիկի մը կամքը, երբ ան ղեռ ի վիճակի չէ սեփական կարծիքներ ունենալու, հետեւաբար իր կեանքի ուղղութիւնը որոշելու: Եւ արդէն իտէսլ վոհմակէ մը ներս ոչ միայն չեն փորձուիլ նման շեղումներ, այլ մինչեւ իսկ կարելի եղած չափով



կը զսպուին գայլիկներու հատուածական հակումները, զորս անոնք կրնան ունենալ՝ օտար ազդեցութիւններու ենթարկուելով:

Գայլիկութիւնը չէզոք գօտի մըն է, ուր տղան կրնայ իր ազատ կամքը պահել եւ ստանալ ազգային ընդհանուր կրթութիւն, ըստ պատկերով որ տարիքին հետ գայ նաեւ որեւէ հոսանքի պատկանելու որոշումը:

Բայց այսքանը պիտի չբաւարարուի գայլիկութիւնը հայապահպանումի որպէս միջոց ընդունելու համար:

Բարեբախտաբար, պզտիկներու այս շարժումը ուրիշ բարեմասնութիւններ ալ ունի:

Նախ տղան սիրով է որ կը կապուի, ինչ որ մեծապէս կը դիւրացնէ անոր կրթութիւնը: Կէս-գիտակից ձեւով ան կը սորվի իր խոստումը, օրէնքը, գիտելիքները: Ու կը խոստանայ սիրել Աստուածը, Հայրենիքը, Ազգը եւ Ընտանիքը: Մինչեւ մեծնայ եւ Աստուածն ու Հայրենիքը հեքեաթի իրենց շրջանակէն ելլեն, դառնան իրականութիւն եւ անոնց սէրը՝ մշտանորոգ ու խոր ապրում, գայլիկը ենթագիտակից կերպով արդէն այնքան ազդուած կ'ըլլայ, որ այնուհետեւ իր հակումները շատ բնականօրէն ուղղուած ուղղութիւնը կ'ունենան:

Ասկէ գտաւ, խաթարիչ ոչ մէկ տարր կայ վոհմակէն ներս: Հակառակ միջազգային իր բնոյթին, գայլիկութիւնը տղան



այլասերումի եւ գաղղութեան մղող ոչ մէկ տրամադրութիւն կը ստեղծէ: Հոն տիրողը եղբայրական անոյշ մթնոլորտ մըն է, ուր աշխարհի բոլոր գայլիկները կը միանան իրարու միեւնոյն կապով, համայնասիրական զգացումները կը հալեցնեն սառուցք սիրտերուն, բայց ոչ մէկ ձեւով ազգասիրական մղումները կը սեղմըին: Օտար ազդեցութիւններ ալ չկան: Վոհմակէն ներս էապէ՛ս ազգային սովորութիւններ է որ կը կիրարկուին, անխաթար պահելով գայլիկներու միտքն ու հոգին՝ ապականիչ ու օտարամուտ հակումներու ազդեցութենէն:



Եւ գայլիկութեան հրաշագոր գեղեցկութիւնը հոն է, որ ազգային միտումները ոչ մէկ ձեւով արգելք կ'ըլլան անոր ընդհանուր սկզբունքներու տեւականացումին: Վսեմ այդ սկզբունքները կը պատւաստուին անխաթիր բոլոր ազգերուն, դարձնելու համար այս շարժումը միջազգային մեծ դպրոց մը, որուն միլիոնաւոր աշակերտները եղբայր ըլլալով մէկտեղ՝ չեն դադրիր ազգային ուրոյն զգացումներ սնուցանելէ

Դեռ կայ վոհմակի բարոյականը: Մեր օրէնքը կ'ուզէ, որ ամէն գայլիկ կէտ առ կէտ գործադրէ իր սորվածները եւ հետեւի մեծերու հրահանգին: Երբ մինչեւ 12 տարեկանը տղան հետեւի իրեն առաջարկուած ուղղութեան եւ անկէ ետք ալ մտնէ սկստական կադապարի մէջ, շատ քիչ հաւանական է, որ հետագային գէշ մարդ դառնայ ան:


Իրենց մաքուր հոգիներուն մէջ:

Հայութեան ձգտումներուն այսքա՛ն յարմար կազմակերպութիւն մը աւելի՛ հետաքրքրութեան պէտք է արժանանայ: Եթէ կ'ուզենք որ մեր մանուկները պատրաստուին լա՛ւ մարդ ու գիտակից հայ րոյալու, պէտք է անոնց առջեւ լայն բանանք ազգային հետաքրքրութեան ու հոգածութեան առարկայ դարձած վոհմակներու դուռները:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY




Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand / Terre vue du Ciel - Licence 075 960031 - Studio/IKM 2005 2005


Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey


Guided Tours
for 8 Days
or 12 Days




11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com



48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com



67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr



32-38, rue Hamrabetoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@armineco.com

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՄԸ ՄԿԱՌՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ազգ կը նշանակէ պատմականօրէն յառաջացած հաւաքական միութիւն մը, որ կը բնորոշուի լեզուի, հողի, մշակոյթի եւ կրօնքի ընդհանրութեամբ եւ նոյնութեամբ: Ազգը կազմող մարդիկ իրարու կապուած են արեւակցական, ազգականական կապերով, սերունդն են նախահայրերու: Ազգ ըսելով երբեք պէտք չէ հասկնալ ցեղ, որովհետեւ ազգային միութիւնը ցեղային միութիւն չէ. ազգը պետութիւն չէ:



Ազգը, հետեւաբար, միութիւնն է այն մարդոց, որոնց ծագումը պատմական է, հող ունին (հայրենիք), նոյն լեզուն կը խօսին, մշակոյթ ունին եւ նոյն կրօնքին կը պատկանին:

Իսկ ազգային կը նշանակէ ազգին յատուկ, այն ինչ որ կը պատկանի ազգին եւ ազգով կը բնորոշուի:

Դաստիարակել կը նշանակէ կրթել, որոշ ուղղութիւն տալ մտքերու եւ զգացումներու: Կը նշանակէ որոշ հմտութիւններ՝ վարք ու բարքի կանոններ եւ գիտելիքներ սորվեցնել:

Հետեւաբար, ազգային դաստիարակութիւն ըսելով նկատի պէտք է ունենալ ազգին յատուկ դաստիարակութիւնը, որպէս ազգին պատկանող երեւոյթ եւ կեցուածք:

Սորվեցնել: Որոշ ուղղութիւն տալ:

Ահաւաստի կենսական հարցը: Արձանագործը քարը կ'առնէ, կը ձեւաւորէ եւ իր ստեղծագործութիւնը կը դնէ անոր մէջ, ուղղութիւն մը կու տայ այդ աննիւթ իրին եւ յանկարծ մէջտեղ կու գայ արուեստագէտին յղացքը, ըմբռնումը, որպէս շնչաւոր եւ խօսուն գաղափար: Մանուկին ինչ որ սորվեցնենք, այդ կը սորվի. մանուկը ինչ որ տեսնէ, այդ պիտի փորձէ ըլլալ եւ կ'ըլլայ:

Հետեւաբար, երբ դաստիարակութեան հարցը կը ծագի ազգային գետնի վրայ, նկատի պէտք է ունենալ հետեւեալ քանի մը երեւոյթները.-

- ա) Մարդը կամ հաւաքականութեան անդամները կրթել, անոնց փոխանցելով ազգային ոգի եւ նկարագիր:
- բ) Անոնց որոշ ազգային ուղղութիւն տալ, զանոնք դնել իրենց սեփական ժողովուրդի ճանապարհին վրայ, որ դէպի իրենց ձգտումներուն նպատակը կ'առաջնորդէ:
- գ) Սորվեցնել անոնց ինչ որ մեր ժողովուրդի նկարագրին

յատուկ է, այսինքն՝ ազգային է, եւ այդ յատկութիւններուն մէջ թրծել եւ զօրացնել անոնց կամքը եւ կորովը:

դ) Կեանքի օրինակ դառնալ: Այսպէս, մանուկը առաջին իսկ օրէն պիտի փորձէ տիպար մը ունենալ եւ հետագային նմանիլ անոր. եթէ մեր կեանքով ապրինք որպէս առողջ հայ, մեր դաստիարակութեան յանձնուած մանուկները, պատանիները այդ ձեւով կը մեծանան, որովհետեւ մանուկին եւ պատանիին համար գերագոյն ճշմարտութիւնը, գիտութիւնը, ուղիղ կեցուածքը, ճիշդը, շիտակը՝ իր մեծն է, իր առաջնորդն է. նոյնն է պարագան հաւաքականութիւններուն:

Այս կենսական յատկութիւնները տեսնելէ ետք անցնինք այն գլխաւոր տուեալներուն, որոնք ազգային դաստիարակութեան հիմը կը կազմեն:

Ի՞նչ պէտք է սորվեցնել լաւ հայեր ունենալու համար. ի՞նչ ուղղութիւն պէտք է տալ անոնց, որպէսզի դէպի հայրութիւն քայլեն. ի՞նչ շունչ պէտք է տալ անոնց, որպէսզի հայ ապրին. վերջին հաշուով շունչ եւ կեանք տալը կրթութեան հիմնաքարն է:

Մարդը ներդաշնակօրէն միութիւնն է մարմինն, մտքին եւ հոգիին:

Եթէ կարողացանք մարդուն մարմինը, միտքը եւ հոգին առողջ պահել, կ'ունենանք առողջ մարդը՝ մարմնապէս, մտապէս եւ հոգեպէս:

Նոյնն է պարագան հաւաքականութեան: Հաւաքականութիւնն ալ վերջին հաշուով անհատ է, որ մէկ անձի պէս մէկ

մարմին ունի: Հաւաքակա-
նութեան անդամները պա-
տերազմի ժամանակ իրենք
զիրենք որպէս ամբողջու-
թիւն կը պաշտպանեն եւ
կը յարձակին. որեւէ հարցի
դիմաց տարբեր կարծիք ու-
նենալով հանդերձ՝ անոնք
նոյն ձեւով կը մտածեն եւ
նոյն ձեւով կը զգան, որպէս
անհատներ:

Եթէ կարողացանք մար-
դուն մարմինը, միտքը եւ
հոգին լաւագոյնս կրթել,
անոր լաւ ուղղութիւն տալ,
կ'ունենանք լաւագոյն մար-
դը:

Արդ, վերադառնալով
հայ անհատի դաստիարա-
կութեան, առաւել կեդրո-
նացում, լուրջ եւ բծախնդիր աշխատանք կը պահանջուի
դաստիարակներէն, որովհետեւ անոնք մարդը կերտելէ ետք՝
հայր պիտի կերտեն եւ ստեղծեն անհատին մէջ: Իսկ հայր կեր-
տելու համար պէտք է՝-

- ա) Հայ մարմինը առողջ պահել:
- բ) Հայ միտքը առողջ պահել:
- գ) Հայ հոգին առողջ պահել:

Այս երեք տուեալներն ալ ազգային դաստիարակութեան
մէջ մեծ դեր ունին եւ իրարմով կ'ամբողջանան ու կ'արժեւոր-
ւին:

Ա) ՄԱՐՄԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ

Մեր պատմական բնաշխարհի (Հայաստանի) դիրքին, կլի-
մային եւ մակերեւոյթին շնորհիւ, մեր ժողովուրդը դարերու
ընթացքին յատուկ կերպարանք եւ մարմնի ձեւ ստացած է՝
կարճահասակէն քիչ մը բարձր, արծուեքիթ, սեւ, նշաձեւ աչ-
քեր, թուխ, շարժունակ կամ աշխատունակ:

Մեր սնունդին տեսակը որոշ հոգեխառնութիւն մը արթն-
ցուցած է մեր մէջ. կծու համեմները՝ որոշ ջղայնութիւն, աղի
քանակութիւնը՝ ֆիզիքական զօրութիւն, արթնութիւն եւ
այլն:

Բնութեան պաղը եւ տաքը, մեր լեռնաբնակ կամ դաշտաբը-
նակ ըլլալը, խիստ ձմեռը եւ տաք ամառը մեր մէջ արթնցու-
ցած են խստակեցութիւն, տոկոսնութիւն եւ պայքարելու ոգի:

Բնազդական մարդը մղում եւ ձգտում ունի ապրելու եւ
ապրեցնելու իր ընտանիքին անդամները: Կլիմայական աւելի
մեղմ պայմաններով երկիրներու մէջ, ուր ժողովուրդը դիւ-
րին կը ճարէ իր ապրուստը, մարդ ենթակայ չըլլար բնութեան
վերիվայրումի խաղերուն եւ անոր զօրութեան պատճառած
վախերուն ու վտանգներուն: Մեր ժողովուրդը կ'ապրի դա-
ժան կեանք մը. օրինակի համար, ձմեռը, երբ խստօրէն կը ձիւ-
նէ, կը փակուին ճամբաները եւ կը կտրուի ամէն յարաբե-
րութիւն, հայր ելք մը կը գտնէ ապրելու (ահաւաստիկ հայուն



հնարամտութիւնը եւ ճար-
տար ոգին): Կը պայքարի
բնութեան ուժերուն եւ զօ-
րութիւններուն դէմ (հով,
փոթորիկ, ձիւն, մրրիկ,
անձրեւ) եւ ինքզինք
կը պաշտպանէ բնութեան
տարերային ուժերուն դէմ
(ահաւաստիկ հայուն մէջ
կը զարգանայ եւ կը զօրա-
նայ պայքարելու ոգին՝ յա-
րատելելու եւ անմահ մնա-
լու համար): Ամէն տեսակի
նեղութեան ենթարկուելով,
խստաշունչ ճմրան մէջ, հա-
յր պէտք է որ ապրէր. հետե-
ւաբար իր մարմինը պիտի
վարժեցնէր թէ՛ պաղին եւ
թէ՛ տաքին՝ ապրելու եւ աշ-
խատելու համար (ահաւա-

ստի տոկոսնութիւնը հայուն):

Բ) ՄՏՔԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ

Միեւնոյն ատեն ընդոծին տաղանդով օժտուած ժողո-
վուրդ մը եղած ենք, մեր գոյութեան սկիզբէն ի վեր: Մենք ենք
ունեցած առաջին անգամ այրուձի, գարեջուր եւ գինի պատ-
րաստելու գաղտնիքը՝ իւրացուցած ազատութեան առաջին
ձգտումները (Հայկ եւ Բէյ) ունեցած ենք արուեստներ, բանա-
հիւստութիւն, իմաստասիրական եւ կրօնական առողջ գաղտ-
փարներ, բազմաստուածեան եւ հեթանոսական: Քարը հրաշ-
քի վերածած ենք: Քարէն մշակոյթ, երգ, բանահիւստութիւն եւ
արուեստ ենք ստեղծած. քարէն ոգի, նկարագիր եւ կեցուածք
ստեղծած ենք:

Քրիստոնէութիւնը, որպէս պետական կրօնք, առաջին ան-
գամ մենք ընդունած ենք, զայն տիեզերական առաջին ճշմա-
րիտ կրօնը դաւանելով, բայց, միեւնոյն ատեն, մեր իւրայատ-
կութիւնը ներդրած ենք անոր մէջ, շրջապատի ազդեցութիւն-
ներէն պահպանուելու եւ մեր ինքնուրոյնութիւնը պահելու
համար: Առէք եւ քննեցէք Դ. դարու սկիզբը (301), երբ հսկայ
Սասանեան Պարսկաստան մը կրակապաշտ հեթանոս էր.
միւս կողմէ Հռոմ կռապաշտ հեթանոս կայսրութիւն մըն էր:
Ասոնց դիմաց բռու մը Հայաստան կը դառնայ քրիստոնեայ՝
ինքզինք աւելի ապահով պահելու համար: Պատմութիւնը եւ
մեր գոյութիւնը վկայ:

Տակաւին, հայ առողջ մտքին ստեղծագործ արդիւնքն են
մեր ժողովուրդի արժէքները, առեւտուրը, երկրագործու-
թիւնը, ճարտարարուեստը եւ խաղաղ շինարարութիւնը:

Գ) ՀՈԳԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ

Ազգայինը ասոնցմով, այսինքն յիշեալ երկուքին ոգեղի-
նացմամբ, նուիրականացումով, պաշտամունքով եւ զայն իբ-
րեւ արժէքաբանութիւն՝ իւրաքանչիւր անհատի հաւատամբ
եւ դաւանանք համարելով կը կազմուի եւ կը պտղաւորուի:

Առողջ եւ հարուստ ժողովուրդի մը հոգին, երբ ան լեցուն է իր նահապետական ավանդութիւններով, երբ զարգարուած է արժէքներու հարստութեամբ եւ մաքուր են իր գագացումները հանդէպ իր նմաններուն: Առողջ է հոգին, երբ այս արժէքները կեանք են եւ իրական ապրում:

Ուրեմն, հայր դաստիարակել, առաջին տուեալի (մարմին) հիման վրայ կը նշանակէ հեռու մնալ օտար ամուսնութենէ, օտար բարքերէ: ասոնք մեծապէս կը վնասեն այս հոգեխառնութեան:

Օտար ամուսնութիւնները կը խաթարեն հայկական տիպարը եւ Ֆիզիքական կերպարը հայուն, որովհետեւ այդ ամուսնութենէն ծնած զաւակը յաճախ երկուքին (այր եւ կին) միութիւնը պիտի պատկերացնէ: Օտար բարքեր ընդունելով մեր իւրապատուկ ապրելակերպը պիտի մոռնանք:

Հայ անհատը հայութիւնը պէտք է ապրի իր հոգիին մէջ: Հայ անհատը նոյնիսկ Հայաստանէն դուրս իր մէջ պէտք է ապրեցնէ Հայաստանը եւ այն ատեն է որ ան չի մեռնիր: Հոգին գանձարանն է մեր հարստութեանց, ամէնէն ամուր գանձարանը, ուր ոչինչ կը կորսուի:

Մեզի համար չկայ աւելի գեղեցիկ եւ մեծ հարստութիւն՝ քան մեր հայրենիքը, մեր ժողովուրդը, մեր ավանդութիւնները եւ մեր հայրենի արժէքները: Մեր մտահոգութեան առարկան ասոնք պիտի ըլլան, ասոնց մասին պէտք է մտածենք յաճախ, այս իրականութիւնները մտահոգութիւն փորձենք

դարձնել ամէն հայու եւ գուրգուրանք անոնց առողջ պահպանումին համար:



Հետեւաբար, ազգային դաստիարակութիւնը պէտք է ձգտի առողջ մարմին, առողջ միտք եւ առողջ հոգի ստեղծել հայուն մէջ՝ հայ ժողովուրդի առողջ գոյատեւումին համար:

Պահպանել մեր լեզուն, որ օտարացումի մէջ սկսած է վտանգի ենթարկուել: հայ մը այսօր երբ խօսի՝ կը նկատենք որ երկու երրորդը անգլերէն է կամ ֆրանսերէն, մէկ երրորդը միայն հայերէն է: Հայերէն լեզուն մէկ երրորդ կամ երկու երրորդ չէ, այլ ամբողջ է՝ երեք երրորդ:

Ազգային դաստիարակութեամբ պիտի ձգտինք իւրաքանչիւր հայու պարտադրել, որ հայ մեծնայ, որ հայեցի առողջ նկարագիր եւ կեցուածք ունենայ:

Պահպանել Հայաստանը. եթէ պահեցինք հայ լեզուն, կը պահենք եւ կը փրկենք հայ մարդը. եթէ պահեցինք ու պահպանեցինք հայ լեզուն եւ հայ մարդը՝ պահած կ'ըլլանք Հայաստանը:

Ազգային դաստիարակութեամբ պիտի ձգտինք իւրաքանչիւր հայու մղել, որ սիրէ իր մայր հողը, իր հայրենիքը՝ Հայաստանը, իր մտասեւեռումը ուղղէ անոր, հայրենիքը դառնայ մտահոգութեան գլխաւոր եւ գերազոյն առարկան: Ազգային դաստիարակութիւնը իւրաքանչիւր հայու պիտի թելադրէ, որ ուր ալ գտնուի ան, ունենայ վերադարձի ճամբայ մը դէպի հայրենի բնաշխարհ, դէպի Երկիր:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar




Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
 32-38, Hanrabadoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europehotel.am

www.europehotel.am

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



1940ական տարիներ. Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի սկաուտներ Սոֆարի արշալի ատեն: Վարիչ Կարապետ Սեծմորուքեան:

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Ը. ՄԱՍ

«Մայիս 17ին մեր ողիմպիականը տուաւ 100 ֆրանքի հասույթ մը: Զեռնարկած ենք Սուրբոյ այլ վայրերու մէջ մասնաճիւղերու կազմութեան, տուած ենք կոչ տեղւոյս մամուլին մէջ, ու գրած առաջժմ Դամասկոսի, Հայէպի եւ այլ վայրերու մարմնակրթական բոլոր միութիւններուն, որ իրենց վայրերուն մէջ ընդունելով Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագիրը դառնան մասնաճիւղեր»:

Ահա նաեւ այդ կոչը.-

«ԿՈՉ ՄԵԾՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԲՈՂՈՐ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

«Նկատի ունենալով մարմնակրթանքին կատարելիք դերը նոր սերունդին ֆիզիքական ու բարոյական զարգացման մէջ, կոչ կ'ընենք բոլորիդ որ հաւաքուիք Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներ-

քեւ: Այս միութեան հիմը դրուած է Պոլսոյ մէջ, 1918ին. իր դրօշին ներքեւ հաւաքած է Ամերիկայի, Ֆրանսայի, Յունաստանի, Ռումանիոյ, Պուլկարիոյ նման հայաշատ վայրերու երիտասարդութիւնը: Մեծն Լիբանանի եւ Սուրբոյ նման 150 հազարի հասնող հայ գաղութի ծոցին մէջ անոր բացակայութիւնը զգալի է, արդ, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութիւնը ինքզինք պարտաւորուած կը զգայ կոչ ընելու մինչեւ հիմա այլեայլ անուններով եւ տարբեր ծրագիրներով գոյութիւն ունեցող մարզական ակումբներուն մէկտեղուելու եւ կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր, իսկ այն վայրերուն մէջ, ուր մարզական շարժում չկայ, հայ երիտասարդներ պարտք զգալու են գալու եւ միանալու այս շարժումին»:

Երիտասարդ ու գործին նուիրուած ձեռքերու մէջ ծնած ու երիտասարդի հուժկու բազուկով բարձրացած Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը իր ծալքերուն հովանին պիտի չսահմանափակուէր Պէյրուսի շրջագիծով: Գիտակից իր կոչումին եւ առաքելութեան, ան պիտի խիզախէր այդ նեղ սահմանէն դուրս, հոն ուր կարիքը կար իր ոգիին, իր շինարար եւ առողջ մթնոլորտին, իր սկզբունքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի վարիչներուն ուշադրութեան պիտի չլքուէր Դամասկոսը, Պէյրուսին ամէնէն մօտ հայկական հոծ գաղութը, ուր կար մարզական կեանքի կորիզ: Վահագն Պատանեկան Միութեան հետ կար նաեւ Կայծակ Հայ Մարմ. Ակումբը: Վարչութիւնը 1 Յունիս 1925ին, նամակով մը կոչ կ'ընէ Կայծակ եւ միւս ակումբներուն, որ միանան Հ.Մ.Ը.Մ.ին, իրբեւ ծանօթ ու կազմակերպուած միութիւն: Խօսքէն գործի անցնելով, հոն կը դրկուի Լեւոն Աբգարեան՝ հիմը դնելու Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին:

Դամասկոսի հայ գաղութին երիտասարդական կազմակերպութիւններէն, Վահագն Պատանեկան Միութեան հրաւերին վրայ, հայ երիտասարդներ ու գոյութիւն ունեցող «Վահագն», «Մասիս», «Շանթ», «Արծիւ», «Դրօ», «Կայծակ» եւ «Տալուրիկ» խումբերը ժողով կը գումարեն: Ժողովին նպատակին պարզումէն ետք, կոչ կ'ուղղուի բոլորին ձուլուիլ եւ յաւաքուիլ Հ.Մ.Ը.Մ.ական խումբեր: «Տալուրիկ» անջատուելով առանձին կը մնայ, իսկ մնացեալներուն միացումով՝ 1925 Օգոստոսին հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին:

Դամասկոսի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը երիտասարդները կը մղէ հաւաքական ուժերով գործունէութեան ընդարձակ դաշտի մը:

Լեւոն Աբգարեան երեք ամիսի չափ Դամասկոս կը մնայ: Նորընտիր վարչութեան հետ համախորհուրդ, այս ժամանակաշրջանին ոչ միայն կը վերակազմուին ու կը դասաւորուին խումբերը, յարատեւ մրցումներու գտումով, այլ Աբգարեան

եւ միութեան անդամները լար-
ւած ճիգերով կը յարդարեն
լքուած դաշտ մը, յարմարցնելու
մարզական խաղերու պահանջնե-
րու չափով մը գոհացում տալու
աստիճան: Արդարեւ, այս տընա-
ջան աշխատանքին արդիւնքը
կը պսակուի աշնան սկիզբը, դաշ-
տահանդէսով մը:

Այսքան առոյգ եւ արագ կեր-
պով ոտքի կանգնած, իր դրօշին
ներքեւ հաւաքած երիտասարդնե-
րու շօշափելի թիւ մը, իր գործու-
նէութեան առջեւ իբրեւ թումբ
պիտի ցցուէր 1925ին, Դամասկոսի
Ժանօթ քաղաքական դէպքը:

Այս դէպքին հետեւանքով,
բազմահարիւր հայեր պիտի գաղ-
թէին: Հ.Մ.Ը.Մ-ը իր սաղմին մէջ
տակաւին, պիտի մնար մինչեւ որ
խաղաղէր Դամասկոսի մթնոլոր-
տը ու սկսէր բնականոն կեանք:

Պէյրուսի եւ Դամասկոսի հետ, Հալէպը, իբրեւ աւելի հա-
յաշատ կեդրոն ու մարմնակրթական կազմակերպուած
ակումբներ ունեցող քաղաք, պիտի կազմէր երրորդութիւն
մը Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին ներքեւ ու այդ դրօշը պիտի բարձրացը-
նէր երիտասարդ ուսերէ վեր, հիւսիսային Սուրիոյ անասհ-
ման տարածութեան, ցեղին անասհման մեռելաստանին վրայ
իբրեւ Տապանակ Ուխտի:

1925 Յունիս 1ին, Հալէպի մէջ գոյութիւն ունեցող մարմ-
նակրթական երեք ակումբները՝ «Արարատ», «Ուսումնասի-
րաց», «Համագասպ», Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի վարչութեան մա-
մուլի կոչէն ետք, կը ստանան հետեւեալ բովանդակութեամբ
նամակներ. -

«Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղը, որ ութ ամիսներ է ի
վեր կազմուած է, ներկայիս տեղույս միակ հայ մարմնակր-
թական միութիւնն է: Իր շուրջ համախմբած է Պէյրուսի գի-
տակից երիտասարդութիւնը անխտիր, այսու կու գայ
խնդրել պատուարժան ակումբէդ ընդառաջելու մեր առա-
ջարկին:

«Նկատելով որ մարմնակրթական միութիւն մը կատարե-
լիք մեծ դեր ունի հայ իրականութեան մէջ, եւ գիտակ որ ար-
դիւնաւոր գործունէութիւն յառաջ կու գայ համախումբ աշ-
խատանքով, կու գանք խնդրել Ձեզմէ որ Ձեր կարելիք ընէք
միանալու տեղացի հայ մարմնակրթական ակումբներուն ու
կազմէք Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ:

«Առ այս, կը տեղեկացնենք Ձեզ թէ դիմած ենք նաեւ «Ու-
սումնասիրաց» եւ «Համագասպ» ակումբներուն ու նաեւ
տոքթ. Ատուր Գապագեանին, պրն. Կ. Սուրաֆեանին այս
հարցին կարգադրութեանը համար իրենց աջակցութիւնը
բերելու»:

Քանի մը շարաթ տատանումներէ ետք, այս երեք ակումբ-
ները երկուքական պատուիրակներով խորհրդակցական ժո-



Յուլիս 1933. Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի սկաուտներ:

ղովի կը նստին տոքթ. Ատուր Գապագեանի տան մէջ: Այս ժո-
ղովին «Համագասպ» ինքնաբերաբար կը յայտնէ իր յարումը
Հ.Մ.Ը.Մ-ին, անոր տրամադրութեան տակ դնելով քսան
հնչիւն ոսկիի արժողութեամբ իր գոյքերը: Իսկ «Արարատ» եւ
«Ուսումնասիրաց» կարգ մը պատճառաբանութիւններէ ետք
կ'առաջարկեն պահել իւրաքանչիւր ակումբ իր վարչութեամբ
ու կազմել լիկա մը՝ վարելու գործերը, հետագային ձգելով
Հ.Մ.Ը.Մ-ի կազմութեան հարցը:

Եղած առաջարկին կը միանայ «Համագասպ»: Լիկան
կը կազմուի: Հագիւ քանի մը ամիս գործակցած, «Արարատ»
եւ «Ուսումնասիրաց» կը յայտարարեն որ երբեք մտադիր չեն
ձուլուելու ի հաշիւ Հ.Մ.Ը.Մ-ին: «Համագասպ» կը մնայ իր
նախկին որոշումին վրայ: Իր համեստ ուժերը տրամադրելով,
ան կը հանդիսանայ առաջին կորիզը Հ.Մ.Ը.Մ-ին: «Համա-
գասպ», 1925 Նոյեմբեր 1ին, «Նաւասարդ» ակումբին մէջ, իր
«Կայծակ» ու «Տալուրիկ» խումբերով եւ անդամներով ինք-
զինք լուծուած յայտարարելով կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ-ի ծրա-
գիր-կանոնագիրը, որ յարմարցուած միջավայրի պայմաննե-
րուն, պատրաստուած ու ղրկուած էր Պէյրուսի: Առանց
փոփոխութեան կ'ընդունուի: Այս ժողովին կ'ընտրուի առ-
ժամեայ վարչութիւն մը, որուն մաս կը կազմեն Լուտեր Մաս-
պանաճեան, Տիգրան Աղճայեան, Սահակ Խաչատուրեան,
Եգեկէյ Մինասեան, Վաղինակ Ճենապեան: Վարչութիւնը պի-
տի վարէր ընթացիկ գործերը մինչեւ գումարուէր անդամա-
կան ընդհանուր ժողով:

Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի առաջին վարչութիւնը իր առաջին նիս-
տը կը գումարէ Լուտեր Մասպանաճեանի տան մէջ, 2 Նոյեմ-
բեր 1925ին: Նորընտիր վարչութիւնը իր ընտրուելը Պէյրուսի
վարչութեան յայտնելով հանդերձ, հայ մամուլին կու տայ հե-
տեւեալ յայտարարութիւնը³⁾:

«Հալէպի մէջ գոյութիւն ունեցող «Համագասպ» մարմնա-
մարզական ակումբը, «Տալուրիկ» ու «Կայծակ» խումբերը

լուծուած են եւ փոխարեւը հիմնուած է 3այ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, համաձայն 1925 Նոյեմբեր 1ին, յիշեալ երեք խումբերով տեղի ունեցած ընդհանուր ժողովի որոշման: Անդամագրուիլ փափաքողները կրնան երկտողով մը դիմել առժամեայ վարչութեան:

Ի դիմաց առժամեայ գործադիր մարմնի
Ա.դպիր Ա.պետ
Տիգրան Աղճայեան Լուսեր Մասպանաճեան»

Նորակազմ միութիւնը ոչ միայն մտահոգուած է սերունդին ֆիզիքական կրթութեամբ, այլ նաեւ անոր հոգեկան ու մտային դաստիարակութեամբ: Այս վերջինը լաւագոյնս կատարելու համար իրեն կը պակսէր հիմնականը.- հաւաքավայրը: Այս հարցին առժամեայ լուծման համար, 17 Նոյեմբեր 1925 թուակիր նամակով դիմում կը կատարուի Այնթապի Կրթասիրաց Միութեան վարչութեան «...Քաղաքիս մէջ նոր հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութիւնս սոյն երկտողով կու գայ խնդրելու, որ Ձեր տրամադրութեան տակ գտնուող շէնքին սենեակներէն մէկը մեզի տրամադրէիք, Կիրակի օրերը, կէսօրէ ետք, միայն երկու ժամուան համար, որպէսզի հնարաւորութիւն ունենայինք մեր անդամները հոն հաւաքելու ընդհանուր ժողովներուն ու բարոյական եւ իմացական նիւթերու շուրջ դասախօսութեան համար»:

Մարզական գետնի վրայ, միութեան գործունէութեան

դաշտը ընդարձակելու եւ կարելի լայն չափերով օգտակար ըլլալու համար անոր դրօշին ներքեւ հաւաքուած երիտասարդութեան, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ական կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով, Նոյեմբեր 22 1925ին, Կիրակի առաւօտ, կը կազմակերպուի հեծելարշաւ՝ դեկավարութեամբ Լեւոն Աբգարեանի:

Հաւաքավայրէ զուրկ այս կազմակերպութիւնը զուրկ է նաեւ խաղավայրէ: Հակառակ դժուարութիւններու, Ֆութպոլի մրցումները մերթ «Ուսումնասիրաց»ի, մերթ «Արարատ»ի, մերթ գինուորական խումբերու հետ կը շարունակուին ամէն Կիրակի, կայարանի ետեւի արտին կամ գետեզերքի դաշտին վրայ:

(Շար. 9)

(1). Օրակարգի տետրակի արձանագրութեանէն կը պարզուի որ այս յայտարարութիւնը դրկուած է 3ալէպի «Սուրիահայ Մանուկ»ին եւ Պէյրութի «Նոր Փիւնիկ»ին: Այս վերջինը միայն հրատարակած է իր Խ. տարի թիւ 53ին մէջ:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>

Հ.Մ.Ը.Մ. ԻՐ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԲԵՐՔԸ ՆՈՐՈԳԵՑ



Սամուէկ Սկրտիչեան ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

- Այօ, ալօ, ո՞վ է:

- Եղբայր Սամուէկ ես եմ՝ Սթիւը: Միուլթենական գործով տեղ կ'երթամ, արդեօք կը հաճի՞ք ընկերանալ ինձի: Ծամբան ձեր գրուլթեան մասին կը խօսինք: Կը ներես, հագիւ կըցայ այսպէս դասաւորել, ժամանակ կարճ է, գործերս՝ շատ:

Կեցաւ: Մինչ ես սկսայ մտածել, թէ Սթիւին երթալիք ճամբաները երկար են՝ Կլէնտէյլէն ծով, ծովէն լեռ, իսկ լեռնէն ետ տուն: Բայց միուլթենական գործ է, սրտիս շատ կը խօսի: Նաեւ ես Սթիւին հանդէպ որոշ համակրանք ունիմ եւ համոզւած եմ, որ ան գործունեայ եւ Հ.Մ.Ը.Մ.ին նուիրուած մարդ մըն է՝ մաքուր, անկեղծ: Ուստի այս տուեալներէն մեկնած, չմերժեցի եղբօր առաջարկը եւ պատասխանեցի:

- Եղբ. Սթիւ, թէեւ գիշեր է եւ ճամբաները երկար, բայց կու գամ, կ'ընկերանամ քեզի, կ'ուզես հետիոտն, բայց մեր ժողովուրդը քալել չի սիրեր...

Այս խօսքիս հետ եղբ. Սթիւին հեռաձայնը լռեց: Տպաւորութիւնս այն եղաւ, որ իմ խօսքէս ազդուած լռեց: Բայց սխալած էի: Քանի ան նորէն հեռաձայնեց.

- Եղբ. Սամուէկ, նախ կը ներես հեռաձայնիս ընդհատումին համար, նաեւ կ'ուզեմ յիշեցնել, որ այսօր հագիւ գիշերուան ժամը 12ին կարենանք տուն հասնիլ: Նաեւ կըրնայ պատահիլ, որ աւելի ալ ուշանանք: Բնական է, նայած ժողովներուն ընթացքին, տեւողութեան:

- Եղբ. Սթիւ, այդ բոլորը հարց չեն: Շատ բնական է որ մեր ուշանալն ու չուշանալը առաւելաբար կախեալ է ժողովներու ընթացքէն: Բայց կարեւորը աշխատանքներու յաջողութիւնն է, արդիւնքն է:

- Եղբ. Սամուէկ, այս փերուն վրայ ազգային աշխատանքներու դաշտերը շատ են: Բայց մեզի համար կարեւորը բանիմաց ու աշխատող ձեռքերն են, որոնք տակաւ կը պակսին, կը հեռանան:

- Եղբ. Սթիւ, չե՞ս կարծեր, որ Հ.Մ.Ը.Մ.ը աշխատող ձեռքերու դասընթացքի մը կարիքին առջեւ կը գտնուի: Քանի տպաւորութիւնս այն է, որ ներքին կեանքէն եկած ուժերը չեն բաւարարեր կարիքները:

Լռեցինք: Մինչ ինքնաշարժը կը սուրբար դէպի նպատակ, դէպի Հ.Մ.Ը.Մ.ական մարդու հաւատամք, դէպի Հայ Կեդրոն: Կարծես մեր հոգիներուն մէջ, մեր միտքերուն մէջ բնագրական ուժ մը կար, որ կամայ թէ ակամայ մեզ կ'առաջնորդէր դէպի ազգային կեանք, դէպի հայակերտումի աշխատանք:

Վերջապէս հասանք ծով: Մեզմէ առաջ, Հայ Կեդրոնի բակին մէջ Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատու երեք քոյրեր միաժամանակ կ'իջնէին իրենց ինքնաշարժներէն: Ուրախայի եւ գնահատելի էր ժամադրութիւն յարգելը: Բայց, Աստուած իմ, սա բարեւոյց քրոջ դէմքը որքան ծանօթ կը թուի ինձի: Ու սկսայ մտածել, թէ ո՞ւր տեսած էի այս դէմքը: Բայց սա ծերացած յիշողութեանէս բան զուրս չեկաւ: Թէեւ կ'ուզէի հարցուփորձ ընել, բան մը հասկնալ: Բայց ժամանակ չունէիք: Եղբ. Սթիւ շուտով պիտի սկսէր ժողովի: Այս էր կացութիւնը: Բայց բնագրօրէն մէկ-երկու քայլ առի դէպի սա տիկինը ու հարց տուի:



նակ անցրնելու համար կը խօսիմ իր վիճակին լքուած պասքէթի դաշտին կողովներուն հետ, անոնց որպիսու- թիւնը կը հարցնեմ: Բայց պատաս- խան չեմ առներ: Տարօրինակ կեց- ուածք է, այս երկրին մէջ ամէն ինչ ձգած են ժամանակի քմահաճոյքին: Կարծես ան է որ պիտի դարմանէ մեր ցաւերը: Բայց այստեղ ես դեռ բժիշկ մը չտեսայ, որ մարդկային ցաւը դարմանէր: Ուրիշէն յոյս չկայ, կ'ընէին մեր պապերը: Ուրեմն մենք պէտք է դարմանենք մեր ցաւերը: Ուստի, մնացի առանձին, գոց դրան առջեւ՝ փունջ մը չոր ծաղիկ ձեռքիս մէջ:

- Աղջիկ, դուն սասունցի չե՞ս, ըսի, առանց անունը տալու- չէի գիտեր,- առանց քաղաքավարութեան յետին նշոյլ մը դնե- լու խօսքիս մէջ, բայց Սասնոյ մէջ քաղաք չկար, որ քաղաքա- վարութիւն ըլլար,- բայց, հաւատացէ՛ք՝ այնքան սէր ու այն- քան ազնուութիւն կար այդ անտաշ խօսքին մէջ, որ հազար քաղաքավարութիւն կ'արժէր: Մինչ ան, այդ անծանօթ աղջի- կը հպարտօրէն պատասխանեց ինծի.

- Այո պարոն, ես սասունցի եմ: Եւ այնքան համոզուած ու այնքան շեշտուած ըսաւ այդ խօսքը, որ կարծես ըսել ուզեց՝ ա՛յ մարդ հարցումդ աւելորդ է՝ դէմքէս, խօսքէս պէտք է հասկնալիր սասունցի ըլլալս: Բայց կարծես ես բաւարար- ւած չէի այդ խօսքով, կարծես բան մը կը պակսէր այդ խօս- քէն: Ուստի շարունակեցի հարցումս.

- Աղջիկ, դուն հայկացի չե՞ս:
- Այո, հայկացի եմ, եւ Ազգային շէնքը կը բնակէինք: Բայց կը ներէք, դուք պրն. Սամուէլը չե՞ք...

Անակնկալ էր: Նորէն նայեցայ այդ աղջկան դէմքին: Նոր- րէն չճանչցայ: Բայց սասունցի, հայկացի էր: Այդ արդէն մեծ դոհոնակութիւն կու տար հողիս, Սասուն՝ հայոց դիւցազ- ներգութեան ոգին էր: Մինչ եղբ. Սթիւ եւ Հ.Մ.Ը.Մ.ական քոյ- րերը ուրախ-ուրախ խնդացին մեր վրայ:

Այդ գիշեր բաւական երկարեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ժողովը: Մինչ ես, անկիւն մը առանձին նստած, ձանձրացայ բան կարդալէն: Ուստի, գլուխս առած փողոց ելայ՝ պահ մը շուրջս դիտելու, մարդ- մարդասանք տեսնելու, գրուցելու: Պահ մը մարդու կարօտ սա հոգիս մարդկօրէն լիցքաւորելու: Բայց, հակառակ որ քսան-քսանհինգ վայրկեան եղաւ, որ կ'երթամ կու գամ սա երկար ու լայն պողոտային վրայ, բայց դեռ մարդու երես չտեսայ, մէկուն Աստուծոյ բարեւ մը չտուրի: Այսքան ժամա- նակ է դեռ հետիտն մարդ չանցաւ սա յայնչի մայթին վրա- յէն: Ով մարդկութիւն, այ ի՞նչպէս կ'ուզէք որ չկանչեմ՝

- Ա՛խ Պէյրութ, ուր են մայթերդ լեցուն,՝ գիշերներդ ար- թուն, մինչ խաղերդ, տաղերդ միշտ խնդուն:

Ու խռով հոգիս առած կը վերադառնամ Հայ Կեդրոն: Բայց տարօրինակ բան, Կեդրոնին երկու-երեք դռներն ալ գոց գտայ:

Սասունցի դուլխս հոս-հոն գարկի, բայց անօգուտ: Ժամա-

վերջապէս դուռը բացին: Բայց դուռը բացող քոյրը զիս տեսնելուն պէս անակնկալի եկած կոչեց.

- Ի՛նչ, դուք դո՞ւրսն էիք:
- Այո քոյրիկ, դուրսն էի՝ սա խոնաւ օդին մէջ, սա չոր ծա- ղիկը վկայ...

- Եղբայր, կ'երեւի մէկը դուռը գոցած է՝ ապահովութեան համար:

- Քոյրիկ ջան հարց չէ, հարց չէ: Բայց հաճեցէք գաւաթ մը ջուր տալ: Թէեւ ծովը մօտ էր, բայց դուրսը ջուր չգտայ:

Նոյն պահուն սասունցի քոյրը անպարտաւար ընդհատ եւ լիջ մը ջուր եւ երկու կտոր հանգստապատառ բերաւ ու տուաւ ինծի: Ծարաւ էի: Նոյն պահուն քոյրերէն մէկը խնդալ ու կատակելով կը կանչէր.

- Տեսա՞ք, տեսա՞ք, սասունցի աղջիկը սասունցի մարդուն երկու-երեք կտոր հանգստապատառ բերաւ: Իսկ մեզի, ... գե- ղեցիկ էր, ուրախ-ուրախ խնդացինք: Մինչ եղբ. Սթիւ ամբող- ջացուց, գեղեցկացուց գիշերը:

- Քոյրիկ, քոյրիկ հոգ մի ըներ, եղբ. Սամուէլ անոր տակը չի մնար՝ վաղը ամէն մէկուդ գիրք մը նուիրէ:

Հոս մեր առանջին հանգրուանը վերջացաւ: Բայց այդ հան- դիպումը ինծի համար ե՛ւ ուրախ, ե՛ւ ահաճ եղաւ: Քանի երեք հայ տիկիներ - վարչական- գաւակ, տուն-տեղ ձգած, եկած էին ժողովի: Բայց անոնց կողքին մէկ հատ էրիկ մարդ չկար: Հազար ապրիք քոյրեր:

Այդ գիշեր ժամը 11ը կ'անցնէր, երբ նորէն եկանք ինքնա- շարժ: Բայց մեր երթալիք ուղղութիւնը դեռ կը մնար անորոշ: Թէեւ մենք ուշացած էինք, բայց մեր երթալիք երկրորդ ժողո- վը փակուած էր թէ՛ ոչ, դեռ չէին դիտեր: Քանի դեռ չէին պա- տասխանած մեր հարցումին: Ու մենք կը գտնուէինք անորո- շութեան առջեւ: Բայց Սթիւին հետ կարծիքներու փոխանա- կութենէ ետք եզրակացուցի.

- Եղբ. Սթիւ, քէ, երթանք լեւ՝ չեմ կարծեր, որ մեր լեռն- ցիները ժողովը վերջացուցած ըլլան: Անոնք ծանր մարդիկ են, հանդարտ-հանդարտ կը քայլեն, նոյնիսկ եթէ ժողովին վերջա- ւորութեան հասնինք, դարձեալ դորժ մը տեսած կ'ըլլանք՝ քա- նի մը խօսք կը փոխանակենք, ժողովին մթնոլորտը կ'իմա- նանք ու վերջաւորութեան, քանի մը ժպիտ, քանի մը բարեւ



Հաւաքած, ուրախ-ուրախ կը դառնանք տուն: Կարծեմ հոգեկան գոհունակութիւն մը առած կ'ըլլանք:

Մինչ Սթիւ առանց պատասխանելու իմ քարոզիս, արդէն գտած էր լեռ բարձրանալու ուղղութիւնը: Ու... վերջապէս

հասանք լեռ. հասանք լեռան կատարին թառած «Ազատամարտ» ակումբը: Սրահին մուտքին բաժնուկեցանք իրարմէ: Եղբ. Սթիւ քալեց դէպի սրահին կեդրոնը, ուր ընդհանուր ժողովը նիստի մէջ էր: Իսկ ես քաշուեցայ անկիւն մը: Բայց ժողովին նախագահը՝ եղբ. Սափօ Կապետեան հրաւիրեց հետեւելու ժողովին:

Կարելի է ըսել, թէ ժողովը առաջին վայրկեանէն իսկ լաւ տպաւորեց զիս: Թէեւ ներկաները մեծ թիւ մը չէին՝ հազիւ 40-45 հոգի: Բայց ժողովին ընթացքը, օրինականութիւնը, օրակարգը ներկայացնելու, քննարկելու մօտեցումը, թեր ու դէմ արտայայտուելու ելոյթները իրապէս հաճելի ու շինիչ տպաւորութիւն կը ձգէին լսողին վրայ: Կարծես ընտանեկան քոյր-եղբայրներու ջերմիկ հաւաք մըն էր, որ տոհմին նահապետական մարդուն շուրջ բոլորուած՝ կարծիքներ կը յայտնէին Հ.Մ.Ը.Մ.ը դէպի տեսլական, դէպի յաջողութիւն առաջնորդելու:

Գեղեցիկ, շինիչ էր: Ժողովը փակուեցաւ: Բայց սկառուտական պատասխանատուները եղբ. Սթիւը շրջապատած դեռ հարցումներ կու տային, կարծիքներ կը փոխանակէին Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն շուրջ: Ապրիլ քաղաք:

Made from one single slice of natural Australian opal

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com

ԱՆՑԵԱԼԸ ԱՊԱԳԱՅԻ ՀԻՄՆԱՔԱՐՆ Է

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ'ԸՍԷ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԶԱՔԱՐ ԶՈՐՊԱՃԵԱՆ



Եղբ. Չորպածեան, ո՞ր թուականէն սկսեալ մաս կազմած էք Հ.Մ.Ը.Մ.ին եւ ո՞ր մասնաճիւղին մէջ գործած էք:

- 1945ին, իբրեւ երէց սկառուտ, պաշտօնապէս մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին, Լիբանան:

Իբրեւ յանձնառու եւ գիտակից Հ.Մ.Ը.Մ.ական, երկու տարուան ընթացքին ես դարձայ աստիճանաւոր, փոխ առաջնորդ, ապա առաջնորդ: 1947ին, Պուրճ Համուտը երեք տարբեր շրջաններու բաժնուեցաւ. իբրեւ Թրատ թաղամասի բնակիչ, ստանձնեցի այդ շրջանի վարիչ առաջնորդի պատասխանատուութիւնը, մինչեւ 1950:

Ծանօթ է մեզի, որ ֆութպոլը եղած է ձեր հետաքրքրութիւններուն գլխաւոր ճիւղը, ի՞նչ կրնաք պատմել այդ մասին:

- Վերահասու դառնալով շրջանի ֆութպոլի խումբերու անկազմակերպ վիճակին, ինչպէս նաեւ ֆութպոլի հանդէպ ունեցած մեծ հետաքրքրութիւնս եւ սէրս նկատի ունենալով, 1950ին, երբ վարչական ընտրուեցայ, ստանձնեցի Պուրճ Համուտի ֆութպոլի առաջին խումբին պատասխանատուութիւնը եւ զայն շարունակեցի քանի մը տասնամեակ:

Այդ տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը յառաջացուց ֆութպոլի պատասխանատու մարմին մը, որուն պարտականութիւնն էր հետեւիլ շրջաններու ֆութպոլի պատասխանատու վարիչներու աշխատանքին:

Ի տես Պուրճ Համուտէն ներս տարած հետեւողական ու գնահատելի աշխատանքիս, ես քանի մը տարի ընտրուեցայ ֆութպոլի պատասխանատու մարմինի անդամ եւ այդ մարմինին մէջ մնացի մինչեւ 1984, առանց հեռանալու Պուրճ Համուտի ֆութպոլի վարիչի պատասխանատուութենէս:

Անշուշտ, բոլորս ալ գիտենք, որ այդ տարիներուն Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը պարեցաւ վերելք՝ իր մարզական բոլոր բնագաւառներուն մէջ, բայց մասնաւորաբար ֆութպոլի մէջ, երբ Պուրճ Համուտի խումբը երեք անգամ շահեցաւ Լիբանանի Բ. դասակարգի ախոյեանութիւնը եւ ութ անգամ ալ՝ Լեռնայիբանանի առաջնութիւնը:

Իբրեւ Լեռնայիբանանի ախոյեանութիւնը շահած խումբ, Հ.Մ.Ը.Մ.- Պուրճ Համուտ 1961ին յորդանանեան խումբերու կողմէ հրաւիրուեցաւ Ամման: Այդ տարի ես ատենապետն էի

ֆութպոլի պատասխանատու մարմինին, եւ իբրեւ այդպիսին, մեծ պատուիրակութեամբ մը խումբը տարինք Յորդանան, ուր արժանացանք յարգալիր ընդունելութեան: Վերոյիշեալ խումբերու հետ մեր ունեցած մրցումներէն ետք, Հիւսէյն թագաւորին կողմէ հրաւիրուեցանք պալատ, ուր ան մեր պատուիրակութիւնը ընդունեց յարգալիր կերպով. տեղի ունեցաւ սիրալիւր տեսակցութիւն եւ թագաւորը հետեւեալ ձեւով գնահատեց ու արժեւորեց մեզ. «Շատ ուրախ եմ որ արտասահմանի հայկական ամենամեծ կուսակցութիւնը կը կոչուի Դաշնակցութիւն եւ անոր ուղեկից Հ.Մ.Ը.Մ.ի մարզական միութեան ներկայացուցիչներն էք դուք: Կը շնորհակտրեմ ձեզ եւ ձեր տարած նուիրական աշխատանքը»: Ապա, թագաւորը իր ձեռքով պատուիրակութեան փոխանցեց գնահատագիր մը:

Յորդանան ուղեւորութեան ընթացքին մեր պատուիրակութիւնը այցելեց Երուսաղէմ, ուր դարձանք տեղւոյն մասնաճիւղի վարչութեան հիւրը եւ միասնաբար ունեցանք յիշատակելի պահեր:

Տեղին է յիշել, թէ Յորդանան այցելութիւնը առաջին քայլը հանդիսացաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի ֆութպոլի առաջին խումբը իմ գլխաւորութեամբս այցելէ նաեւ շարք մը այլ երկիրներ:

Միջանկեալ կ'ուզեմ յիշել, թէ վերոյիշեալ իրագործումներու կողքին կազմակերպած եմ նաեւ Պուրճ Համուտի շրջավազը՝ աւելի քան 10 տարիներ:

Վարչական ի՞նչ պաշտօններ վարած էք Պուրճ Համուտի մասնաճիւղէն ներս:

- 1950էն մինչեւ 1984 ընդհանրապէս եղած եմ վարչութեան մէջ, իսկ Շրջանային Վարչութեան ստեղծած ֆութպոլի պատասխանատու մարմինին մէջ եղած եմ յարատեւ: Երեք անգամ վարած եմ ատենապետի պաշտօնը, իսկ մնացեալ տարիներուն գտնուած եմ փոխ ատենապետի դիրքին վրայ:

1967-1984 Լիբանանի ներքին գործոց նախարարութեան որոշումով վարած եմ Պուրճ Համուտի քաղաքապետութեան ֆութպոլի ղաշտին պատասխանատուութիւնը: Նոյն տարիներուն, իբրեւ վարչական, Պուրճ Համուտի պատգեթպոլի խումբ

բըր առաջնորդեցի եղիպտոս, ուր անոնք արձանագրեցին շարք մը յաղթանակներ:

Ի՞նչպէս կը ներկայացնէր Պուրճ Զամուտի ֆութպոլիստներուն նպաստը եւ կարեւորութիւնը Լիբանանեան ֆութպոլին, յատկապէս Զ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի ներկայացուցչական կազմի գործունէութեան ընդմէջէն:

- Պէշրութի եւ Պուրճ Զամուտի վարչութիւնները սկիզբէն անհամաձայնութիւններ կ'ունենային իրարու հետ՝ մարզիկները Ա. խումբ փոխանցելու հարցով: Այս վիճակը տեւեց մինչեւ 1968: Այդ թուականին, Շրջանային Վարչութեան որոշումով, Պուրճ Զամուտի պատասխանատուութեանս կողքին եղբ. Ժոզէֆ Նալպանտեանին հետ նշանակեցայ ֆութպոլի ներկայացուցչական խումբի Բ. պատասխանատու եւ այդ տարի Պուրճ Զամուտի խումբէն 8 մարզիկներ փոխանցեցինք Ա. խումբ, որուն շնորհիւ Հ.Ս.Ը.Ս.ի ներկայացուցչական խումբը Լիբանանի ախոյեանութիւնը շահեցաւ: Շնորհիւ ջանքերուս երկու կողմերն ալ օգտուեցան:

Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնին մէջ ի՞նչ գործունէութիւն ունեցած էք:



1955. Եղբ. Չորպաճեան (ոտքի, ձախտն առաջինը) Զ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Զամուտի խումբին հետ:

- Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Զամուտի մասնաճիւղի որպէս ներկայացուցիչ, 17 տարի յաջորդաբար մասնակցած եմ Լեռնալիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի տարեկան ընդհանուր ժողովներուն: Այդ ամբողջ շրջանին ընտրուած եմ վարչական եւ նշեալ մարմինէն ներս փոխն ի փոխ վարած եմ գանձապահի եւ փոխ ատենապետի պաշտօններ: Այս ժամանակամիջոցին նաեւ վարած եմ Լեռնալիբանանի խառն խումբի պատասխանատուութիւնը, յաղթանակներ տանելով տեղական Ա. կարգի կամ ախոյեանութիւնը շահած խումբերու դէմ կազմա-

ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ԱՆԴԱՄԱՔԱՐՏ

Եղբ. Չաքար Չորպաճեան Զ.Ս.Ը.Ս.ին անդամակցած է 1945ին, իբրեւ երէց սկաւուտ: Երկու տարի իր բնակած Թրատի շրջանի (Պուրճ Զամուտ) սկաւուտ խմբապետի պաշտօնը վարելէ ետք, 1950ին ընտրուած է Զ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Զամուտի մասնաճիւղի վարչութեան անդամ: Յաջորդական 25 տարիներ ան մաս կազմած է մասնաճիւղին ֆութպոլի խումբերու յանձնախումբերուն եւ իր կարեւոր ներդրումը ունեցած է անոնց արձանագրած յաջողութիւններուն: Այս միջոցին, Զ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Զամուտի ֆութպոլի ներկայացուցչական խումբը երեք անգամ շահած է Լիբանանի Բ. դասակարգի ախոյեանական մրցաշարքերը, ութ անգամ՝ Լեռնալիբանանի առաջնութիւնը եւ բազմաթիւ մրցաշարքերու խլած է բաժակներ: 1963ին խումբը մինչեւ իսկ բարձրացած է Ա. դասակարգ:

Եղբ. Չաքար Չորպաճեան 17 տարի մաս կազմած է ֆութպոլի Լեռնալիբանանի ֆետերասիոնին՝ արժանանալով իր արաբ գործակիցներու վստահութեան եւ անվերապահ յարգանքին:

1960-1970ականներուն, տեղւոյն նահանգապետին կողմէ ան նշանակուած է երկրորդական վարժարաններու ֆութպոլի մրցաշարքի կազմակերպիչ եւ ընդհանուր պատասխանատու, որուն իբրեւ արդիւնք՝ ան արժանացած է Լիբանանի օրուան նախագահ Սլէյման Ֆրենժիէի շքանշանին: 1967-1984, Լիբանանի ներքին գործոց նախարարութեան կողմէ

նշանակուած է Պուրճ Զամուտի քաղաքապետարանի դաշտի յանձնախումբի անդամ, հսկելու նորաշէն եւ արդիական դաշտի հոգածութեան ծրագիրներուն եւ պիւտձէին:

Ֆութպոլէն անկախ եղբայր Չորպաճեան աշխատած է աթլետիզմի մարզէն ներս: 1955ին, առաջին անգամ ըլլալով կազմակերպած է Պէշրութ-Պուրճ Զամուտ վազքի մրցաշարքը, իսկ 10 տարի շարունակ կազմակերպած է Պուրճ Զամուտի վազքի մրցաշարքը: Ի պաշտօնէ Զ.Ս.Ը.Ս.ի Պէշրութի եւ Պուրճ Զամուտի մասնաճիւղերու պատուիրակութիւններու հետ ծամբորդած է զանազան երկիրներ. Արեւելեան Երոպա, Գահիրէ, Քաթար, Յորդանան, Սուրիա: Յորդանան այցելութեան ընթացքին մօտէն ծանօթացած է Դիւսէյն թագաւորին եւ արժանացած է անոր թագաւորական շքանշանին:

Զ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ ան պարգեւատրուած է Զ.Ս.Ը.Ս.ի «Ճառայութեան» շքանշանով:

1984ին, եղբայր Չորպաճեան մեծ դեր ունեցած է Պէշրութէն Լոս Անձելըս այցելող եւ Քալիֆորնիոյ նորակազմ ֆութպոլի խումբերու կազմութեան եւ անմոռանալի մրցումներու կազմակերպման մէջ, որոնք նախաբայլը հանդիսացան հետագային Լոս Անձելըսի մէջ կազմուելիք ֆութպոլի վեթերաններու խումբին:

կերպուած մրցումներուն: 1962-1973, Լեոնայիրանանի նահանգապետին որոշումով, կազմակերպած եմ տուեալ շրջանի երկրորդական վարժարաններու Ֆուլթոնի ախոյեանութեան մրցումները: Այդ գործունէութեանս իբրեւ գնահատանք, 1973ին, Լիբանանի նախագահ Սլէյման Ֆրենտիէի ձեռամբ արժանացայ Լիբանանի «Մայրի»ներու շքանշանին:

Ներկայիս Ի՞նչպէս կը գնահատէք Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանին մէջ եւ Ի՞նչ պատկերացումներ ունիք անոր ապագային նկատմամբ:

- Եթէ Նկատի ունենանք Արեւմտեան շրջանէն ներս Հ.Մ.Ը.Մ.ի՝ այս եզակի կազմակերպութեան ծաւալած գործունէութիւնը, իր մասնաճիւղերով եւ մարզական խումբերով, հպարտօրէն ու անվարան կրնամ յայտնել, թէ ան կը գտնուի իր արժանի եւ գնահատելի բարձրութեան վրայ, եւ կարելի չէ այդ հակայ գործունէութիւնը ներկայացնել հարցազրոյցի մը մէջ: Սակայն, յատկանշական է յիշել Շրջանային Վարչութեան կազմակերպած Նաւասարդեան խաղերը, որոնք ամէն տարի տեղի կ'ունենան Յունիս ամսուան ընթացքին, իսկ Յունիս Կի շարժապետներին տեղի կ'ունենայ փակման հանդիսութիւնը: Որեւէ սփիւռքահայու համար չեմ կարծեր թէ հպարտութեան աւելի արժանի երեւոյթ ըլլայ՝ քան Նաւասարդեան խաղերը, մանաւանդ փակման հանդիսութիւնը, ուր բոլոր մասնաճիւղերը իրենց մարզիկներով կը տողանցեն բազմահազար հայ հանդիսատեսներու ներկայութեան եւ կը յայտարարուին անոնց արձանագրած նուաճումները: Սա արդէն մեր թագաւորական օրերէն մնացած հանդիսութիւն է եւ մինչեւ այսօր ալ պահած է իր վեհութիւնը, բոլորիս մէջ վառ պահելով հզօր ազդի մը շառաւիղը ըլլալու զգացումը:

Արեւմտեան շրջանի հակայ ընտանիքին տարած աշխատանքին, մենք իբրեւ վեթերաններ, մեր մասնակցութիւնը կը բերենք մեր ուժերուն ներած չափով: Սակայն, չկարծէք թէ տարիքի յառաջացումը մեր մէջ մարած է Հ.Մ.Ը.Մ.ին հուրը, ընդհակառակը՝ այդ հուրն է որ անգամ մը եւս զիս մղեց Լոս Անճելըսի մէջ հիմնելու Ֆուլթոնի վեթերաններու խումբը, որուն անդամները ամէն Կիրակի հաւաքուելով եւ խաղեր կազմակերպելով կը վերապրին անցեալի իրենց քաղցր յուշերը:

1984ի Նաւասարդեան խաղերուն, Շրջանային Վարչութիւնը հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի փառքը կերտած Լեոնաները, Արոններ եւ Ծոփները (շարքը երկար է), որոնց ներկայութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց Պէյրութէն հաստատուած հայկական շրջանակին մօտ, որոնք վարժ էին այդ մարզիկները տեսնել մրցումներու ընթացքին:

Մեկնելով վերոյիշեալ տուեալներէն, ես կը կարծեմ թէ Հ.Մ.Ը.Մ., ուր որ ալ գտնուի, համաձայն իր նշանաբանին, պիտի բարձրանայ եւ իր հետ բարձրացնէ հայութեան անունը: Իբրեւ նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական, նկատի առած Սփիւռքի կլանող հոսանքը, մեր նոր սերունդին կը թելադրեմ որ իրենց զաւակները մանուկ հասակէն անպայման առաջնորդեն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը, ուր մարմնամարզի կողքին անոնց կը ջամբուի հայրենասիրութիւն եւ անոնց հոգիին մէջ կը դրոշմ-

ը՝ լի ազգային պատկանելիութիւն: Վկայ՝ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգը:

Եղբ. Չորպաճեան, 1998ին դուք արժանացաք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արտակարգ» պատանշանին: Ի՞նչպէս ընկալեցիք այդ պարգեւատրումը:

- Կեանքիս մէջ յիշատակելի եւ եզակի օր մը եղաւ պարզեւատրումը, որովհետեւ ան յիշեցուց երիտասարդութեանս տարիները: Այս պահուս մտքիս պատասախն վրայ արդէն կը տեսնեմ ինքզինքս 50-60 տարի աւելի երիտասարդ, եւ երիտասարդական խանդաղատանքով դաշտէ դաշտ վազվրտտուքս: Այդ բոլորը աչքիս առջեւ կը տողանցեն, ինչպէս որ յայտնեցի պատուանշանով պարգեւատրուած օրս:

Վերադառնալով հարցումին, ես կ'ուզեմ նախ այդ մասին մտածումներս եւ զգացումներս յայտնել: Նախ պէտք է ըսել, թէ ոեւէ հայու համար պարծանք է մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին: Ինչպէս որ ես նուիրումով ծառայեցի, վստահ եմ որ այսօր ալ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները նուիրումով եւ առանց ակնկալութեան է որ կը ծառայեն: Այս արդէն մաս կը կազմէ ազգային կեանքի նշանաբանին, անսակարկ նուիրուիլ գործին, զոհաբերել առանց ակնկալութեան, աշխատիլ առանց փառքը փնտռելու: Սերունդներ ամբողջ այդպէս գործած ու անցած են: Սակայն այս բոլորին կողքին կայ զգացական բաժին մը, որ մենք սովոր ենք արտայայտել մեր վեթերան եղբայրներուն եւ նուիրեալներուն, այդ մէկը Կեդրոնական Վարչութեան հաստատած շքանշաններն են, որոնցմէ «Արտակարգ» պատուանշանին արժանացայ ես: Նոյնիսկ հիմա ես կ'ապրիմ այդ օրուան յուզումը, պահ մը, որ երբեք պիտի չհեռանայ յիշողութեանէս, որովհետեւ մինչեւ այն ատեն որ մենք դիտենք յարգել ու պատուել մեր մեծերը՝ մենք յառաջ կ'երթանք, մինչեւ այն ատեն որ մենք կը ստեղծենք այսպիսի պահեր՝ մենք բոլորս կը պանծանք, իսկ մինչեւ այն ատեն որ կը գիտակցինք թէ անցեալը ապագայի հիմնաքարն է՝ մենք չենք մեռնիր: Հ.Մ.Ը.Մ. նման հզօր միութիւն է, որ թէեւ մեր իրականութեան մէջ ունի 90ամեայ պատմութիւն, սակայն անոր արմատները շատ խորն են եւ կարծէք միախառնուած են մեր ժողովուրդի հնադարեայ պատմութեան:

Այս ուրախ առիթով ես կ'ուզեմ խորին շնորհակալութիւնս յայտնել Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ զիս գնահատելու գեղեցիկ գաղափարին համար, «Մարզիկ» ամսաթերթին, որ իր հարցազրոյցով առիթը ընծայեց ինծի յուշերս եւ զգացումներս արտայայտելու, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ Սան Ֆրանսիսկո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի վարչութեան, որուն իբրեւ մէկ անդամը, մինչեւ օրս ժողովի հրաւերներ կը ստանամ, եւ վերջապէս շնորհակալութիւն վեթերան եղբայրներուս, որոնց հետ առիթը ունեցած եմ պատմութիւն կերտելու:

Եզրափակելու համար խօսքս, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններուն, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր եղբայրներուս կը մաղթեմ յարատեւ կորով եւ աննահանջ երթ, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. չմնայ միայն Սփիւռքի միութիւն, այլ հայրենիքէն ներս ալ ունենայ նոյնքան բեղուն ու փայլուն գործունէութիւն:



ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԵՆԵՐՈՒ «ԶԵՄՓԻԸՆՁ ԼԻԿ» ՎԵՐԱԴԱՐՁԸ

Գեորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

1 985ին, «Հեյզել»-ի ողորերգ թիւնը ժամանակաւոր վերջակէտ մը կը դնէր եւրոպական մրցաշարքերուն անգլիական ակումբներու մենիշխանութեան:

Արդարեւ, 1977էն մինչեւ 1985 երկարող տասնամեակին, միայն մէկ անգամ Համպուրկ կարողացած էր եւրոպայի ախոյեանութեան տիտղոսը խլել եւ բաժակը տանիլ Գերմանիա (1983): 1977ին եւ 1978ին Լիվրփուլ, 1979ին եւ 1980ին Նոթինկհամ Ֆորէսթ, 1982ին Ասթոն Վիլա, 1984ին դարձեալ Լիվրփուլ հանդիսացած էին ախոյեան:

Նախքան 1970ականներու երկրորդ կէսը, որեւէ երկիր չէր յաջողած տիրա-



կան ներկայութիւն ըլլալ եւրոպական այդ օրերու երեք մրցաշարքերուն: Պատահած էր որ կարգ մը ակումբներ (Ռէնալ Մատրիտ, Այաքս Ամսթերտամ, Պայէրն Միւնխի) յաջողին քանի մը տարի յաջորդաբար տիրանալ տիտղոսի, սակայն այդ մէկը որեւէ երկրի գերակայութիւնը չէր հաստատեր: 1970ականներու երկրորդ կէսէն սկսեալ անգլիացիք

ոչ միայն տիտղոսակիր էին, այլեւ՝ գրեթէ մնայուն ներկայութիւն աւարտականներուն:

1985ին անգլիական ակումբները հինգ տարիով կը գրկուէին մասնակցելէ եւրոպական մրցաշարքերուն: Առաջին տարիներուն պատահական ակումբներ (Սթէուա Պուլքէշ, Միչըլէն, Կարմիր Աստղ, Կէօթըպըրկ եւ այլն) յաջողեցան տիրանալ տիտղոսներու: 1980ական թուականներու վերջերուն իտալական ֆուլթպուրը պարեցաւ իր զարթօնքը եւ մեծ ակումբները տիրական ներկայութիւն դարձան եւրոպական մրցաշարքերուն եւ խլցին տիտղոսներուն առիւծի բաժինը: Ա.Սէ. Միլան, Ինթէր Միլան, Եուվենթուս, Նափոլի, Փարմա եւ այլն ամէն տարի իտալական ֆուլթպուրին պարզեցին բաժակներ:

Սակայն, իտալական ակումբային այս

ԵՐԿԻՐ	ՏԻՏՂՈՍ	ԱԿՈՒՄԲԵՐ	ՏԻՏՂՈՍ	ԽԱՂԱՑՈՂ	ՄՐՑՈՒՄ	ԿՈՒ
Իտալիա	11	Ռէնալ Մատրիտ	9	Ռաուլ	122	64
Սպանիա	11	Ա. Սէ. Միլան	7	Նիսթրրոյ	79	60
Անգլիա	11	Լիվրփուլ	5	Շեւչենքօ	103	56
Գերմանիա	6	Պ. Միւնխի	4	Տի Սթեֆանօ	58	49
Հոլանտա	6	Այաքս	4	Էօզէպիօ	64	47
Փորթուգալ	4	Մ. Եուլապթա	3	Ինգալի	75	46

յաջողութիւնները տեւեցին հազիւ տասնամեակ մը: Ծիշղ է, որ 1995էն սկսեալ եւ մինչեւ նախանցեալ տարի անոնք կը տիրանային բաժակներու, սակայն անոնք այլեւս «սարսափ» չէին ներկայացներ այլ ակումբներու, ինչպէս որ էր 1988-1995: Կարգ մը երկիրներու մեծ ակումբներ դարձեալ մրցակիցներ կը սկսէին դառնալ: Գերմանական, սպանական, հոլանտական ակումբներ այլեւս ոչ միայն մրցակիցներ էին, այլեւ՝ տիտղոսակիրներ:

1991ին անգլիական ակումբները երկչոտ վերադարձ մը կ'ունենային, երբ նոյն տարին Մանչեսթրը Ետեմաթըտ կը տիրանար Եւրոպայի բաժակակիրներու բաժակին: Այդ թուականէն ետք, շուրջ 10 տարի, անգլիական ակումբներ լուսանցքային դեր ունեցան եւրոպական մրցաշարքերուն: 1999ին, Մանչեսթրը Ետեմաթըտ դարձեալ տիրացաւ «Զեմփիրնոգ լիկ»ի տիտղոսին:

Սակայն, վերջին քանի մը տարիներուն վերստին ակնյայտ դարձաւ անգլիական ակումբներու տիրապետութիւնը եւրոպական մրցաշարքերուն: Եւրոպական մրցումներուն անոնք ներկայութիւն են: Եւրոպայի խումբերէն երեքը անգլիական էին, իսկ աւարտականը զուտ անգլիական էր: Այս տարի, ցարդ ութ խումբերէն չորսը անգլիացիներն են եւ մեծադոյն թեկնածուներն են տիտղոսին տիրանալու:

Ինչո՞վ կարելի է բացատրել այս երեւոյթը:

Հակառակ «Հեյզլի ցնցում»ին, անգլիական ֆութպոլը մնաց նոյն մակարդակին վրայ: Ծիշղ է որ քանի մը տարուան համար անոնք եւրոպական իմաստով հետաքրքրութիւն չունէին եւ սահմանափակուած էին ազգային ախոյեանութեան պայքարով, սակայն մակարդակի իմաստով անոնք պահեցին իրենց բարձրութիւնը: Եւրոպական մրցաշարքերու վերադարձէն ետք,

առաջին տարիներու անյաջողութիւնները պէտք չէ վերագրել անոնց մակարդակի անկումին, այլ կարգ մը այլ երկիրներու ակումբներու հզօրութեան (չմոռնանք 1990ականներու Ա. Սէ. Միլանը, Ետեմաթըտը, Այաքսը, Ռէալ Մատրիտը եւ այլն): Իսկ վերջին քանի մը տարիներուն անգլիական ֆութպոլը աւելի ու աւելի գրաւիչ դարձած է, աստղերու կեդրոնատեղի, եւ բարձր մակարդակի ֆութպոլի թատերավայր: Հետեւաբար, բնականօրէն, անոնք իրենց հզօրութիւնը ցոյց պիտի տան նաեւ եւրոպական ակումբներու մակարդակին եւ անպայմանօրէն յաճախակի տիտղոսակիրներ դառնան: Անգլիական ակումբներու ֆութպոլի ներկայ մակարդակը մեզի կը յուշէ, թէ անոնք դարձեալ գերակայութիւն պիտի հաստատեն Եւրոպայի մէջ, ինչպէս որ էր 1970ականներու երկրորդ եւ 1980ականներու առաջին կէսերուն:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՄԻՆԸ ԱՆՑՆՈՂ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ,
ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ՝ ՇՐՋԱՆԻ 12ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ)

ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄ

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի 28 Յունուար 2007ի համաժողովի ընթացքում ընտրուած վարչութիւնը առաջին նիստում կատարեց պարտականութիւնների հետեւեալ բաժանումները.-

Ատենապետ- Հրաչ Շմաւոնեան
Փոխ ատենապետ, գանձապահ- Օշին Փիրումեան

Ատենադպիր- Ռուզան Թամրազեան

Քարոզչութեան պատասխանատու- Դաւիթ Յակոբեան

Ձաւարիքի պատասխանատու- Յարութիւն Նասոյեան

Հետազային, քոյր Ռուզան Թամրազեանի հրաժարականից յետոյ, վարչութիւնը համալրուեց քոյր Լիլիթ Ջաքարեանով:

ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2007 թ.ին վարչութեան կողմից հաստատուել է խմբապետական խորհրդի հետեւեալ կազմը.-

- Քոյր Լիլիթ Ջաքարեան
- Քոյր Գոհար Ջարդարեան
- Քոյր Նունէ Մարգարեան
- Քոյր Օֆելիա Յարութիւնեան
- Եղբ. Արմէն Նազարեան
- Եղբ. Վարդան Միրումեան
- Եղբ. Անդրանիկ Առուստամեան
- Եղբ. Սարո Պօղոսեան

2007 թ. Հոկտեմբերի 23ից խորհուրդի կազմից դուրս է եկել եղբ. Անդրանիկ Առուստամեանը՝ հանրապետութիւնից մեկնելու պատճառով, իսկ 2008 թ. Սեպտեմբերին՝ վարչութեան որոշմամբ կասեցուել է եղբ. Սարո Պօղոսեանի խորհուրդի անդամութիւնը, այնուհետեւ քոյր Գոհար Ջարդարեանը եւ քոյր Օֆելիա Յարութիւնեանը անձնական պատճառներով դուրս են եկել խորհուրդի կազմից:

2008 թ. Նոյեմբերին վարչութեան որոշմամբ խորհուրդի



կազմը համալրուել է եղբայրներ Արթուր Կարապետեանով, Կարէն Տէրտէրեանով եւ քոյր Նարինէ Ջարդարեանով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

2007 թ.

1. Յունիսի 15ին, Խմբապետական Խորհրդի կողմից կազմակերպուել է համահայաստանեան արշաւ դէպի Մեղրաձոր. արշաւին մասնակցել են 120 գայլիկ, սկաուտ եւ երէց: Արշաւի ընթացքում կազմակերպուել է սկաուտական երգման արարողութիւն:

2. Օգոստոսի 14-20ը Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի Բիւրականի բանակապարտում խմբապետական խորհրդի կողմից կազմակերպուել է համահայաստանեան տարեկան բանակում, որին մասնակցել են Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի բոլոր միաւորներից թուով 170 գայլիկ, սկաուտ եւ երէց: Բանակման հիմնական նպատակը տարբեր միաւորների սկաուտներին միմիանց հետ ծանօթացնելն էր, ինչպէս նաեւ տարուան ընթացքում նրանց ձեռք բերած տեսական գիտելիքների գործնական կիրառումը: Բանակապարտ են հրաւիրուել տարբեր մասնագէտներ, որոնք դասախօսութիւններ են կարդացել համալսարանին խնդիրների, աղբի վերամշակման, մարդու իրաւունքների եւ քաղաքացիական հասարակութեան վերաբերեալ:

3. Նոյեմբերի 17-18ը Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի կենտրոնական գրասենեակում վարչութիւնը կազմակերպել է խմբապետական սեմինար, որին մասնակցել են խորհուրդի անդամներն ու միաւորների պատասխանատուները:

4. Դեկտեմբերի 16ին Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի անդամներն այցելել են Եռաբլուր՝ յարգանքի տուրք մատուցելու Արցախեան հերոսամարտում նահատակուած եղբ. Վարդան Բախչեանի յիշատակին: Այցից յետոյ, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍ.Կ.Ի անդամներն ուղեւորուել են Սբ. Սարգիս եկեղեցի՝ մասնակցելու եղբոր յիշատակին կազմակերպուած հոգեհանգստի պաշտօնին:



Այնուհետև, գրասենեակում կազմակերպուել է Վարդանին նուիրուած Ֆիլմի ցուցադրութիւն եւ հանդիպում Վարդանի մօր՝ քոյր Այտա Բախշեանի, քրոջ եւ ընկերոջ հետ:

2008 թ.

1. Յունուարի 9ին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կենտրոնական գրասենեակում կազմակերպուել է համահայաստանեան գայլիկական ամանօրեայ միջոցառում՝ 40 գայլիկների եւ արժեքներին մասնակցութեամբ:

2. Յունուարի 13ին կազմակերպուել է համահայաստանեան ամանօրեայ միջոցառում՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի բոլոր միաւորների լաւագոյն սկաուտների մասնակցութեամբ՝ ընդհանուր թուով 60 հոգի:

3. Մայիսի 30ին խմբապետական խորհուրդը, եղբ. Վարդան Բախշեանի ծննդեան օրուան յիշատակի կապակցութեամբ, այցելել է Եռաբլուր:

4. Մարտ - Ապրիլ ամիսներին տեղի է ունեցել համահայաստանեան սեմինարների շարք՝ խմբապետական խորհուրդի եւ միաւորների աստիճանաւորների համար:

5. Օգոստոսի 18-23ը տեղի է ունեցել համահայաստանեան բանակում նուիրուած Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրման 90ամեակին: Մասնակցել է 130 հոգի, որից 25ը՝ գայլիկներ: Սկաուտական դիտելիքներից բացի, մասնակիցները ստացել են ընդհանուր զարգացման գիտելիքներ, անցկացուել են դաստիարակչական եւ մարզական մրցոյթներ:

Սկաուտներից բացի, բանակում մասնակցել են հասարակական այլ կազմակերպութիւններից 10 երեխաներ, որոնք նախկինում ծանօթ չեն եղել սկաուտական շարժմանը:

6. Սեպտեմբերի 20-21ը խմբապետական խորհուրդը, անկախութեան տօնին նուիրուած, արշաւ է կազմակերպել դէպի Արագած: Մասնակցել են Երեւանի, Արմօրեանի եւ Չարենցաւանի միաւորների սկաուտները, ընդհանուր թուով 25 հոգի: Միջոցառումը կազմակերպուել է «Փիւնիկ» հաշմանդամների միութեան հետ համատեղ:

7. Դեկտեմբերի 7ին կազմակերպուել է այց դէպի Գիւմրի: Մասնակցել են Երեւանի, Արմօրեանի եւ Գիւմրիի սկաուտները, ընդհանուր թուով 23 հոգի: Այցելութիւն է եղել Եօթ Վէրք եկեղեցի, Յովհաննէս Թումանեանի անուան մանկական գրադարան, որը զետեղուած է այն տանը, ուր ժամանակին ապրել է Վահան Չերազը: Ապա, կազմը մասնակցել է երկրաշարժի 20րդ տարելիցին նուիրուած յուշակոթողի բացման արարո-



ղութեանը, ուր եւ տարագաւոր սկաուտները ծաղկեպսակ են դրել: Վերջում այցելութիւն է եղել Գիւմրիի «Ժողովրդական ճարտարապետութեան եւ քաղաքային կենցաղի թանգարան»:

8. Դեկտեմբերի 16ին վարչութիւնը եւ խմբապետական խորհուրդը մասնակցել են Պետական Համալսարանի պատմութեան մասնաշէնքում Վարդան Բախշեանի անուան լսարանի անուանակոչութեանը, որից յետոյ այցելութիւն է եղել Եռաբլուր եւ ծաղկեպսակ դրուել եղբօր շիրիմին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Համահայաստանեան բանակումների ու միջոցառումների ժամանակ հայկական տարբեր կազմակերպութիւններից պարբերաբար հրաւիրուել են ներկայացուցիչներ, որոնք իրենց գիտելիքներն ու փորձն են փոխանցել սկաուտներին, ինչը տրուել է սեմինարների, դասախօսութիւնների եւ խաղերի միջոցով:

• «էկօ-ակումը Տապան» հասարակական կազմակերպութիւնը առաջարկել եւ Բիւրականի բանակավայրի խոհանոցում տեղադրել է արեգակնային էներգիայով ջուր տաքացնող սարք: «էնՕԴՄ»-ն՝ էներգիայի եւ ռեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր է, որի նուիրատուն միջազգային համակարգող «Նորվեգիական բնութեան պահպանութեան ասոցիացիան» է:

• «Արեւորդի» կազմակերպութեան հետ համատեղ, մօտ 50 սկաուտներ Երեւանում եւ Գիւմրիում մասնակցել են բնապահպանման ծրագրերի հիմնականում եղել է ծառատունկ եւ հանրային աշխատանք:

• Յունուարի 28ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչները մասնակցել են մատենադարանում կազմակերպուած Վարդանանց տօնին եւ հայոց բանակի հիմնադրման 16ամեակին նուիրուած միջոցառման: Միջոցառումը կազմակերպել էր մատենադարանի հովանու ներքոյ գործող «Հայրենեաց ձեռագրեր» նորաստեղծ հասարակական կազմակերպութիւնը:

• 2007 թ. եւ 2008 թ. Ապրիլի 23ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի բոլոր միաւորների սկաուտները մասնակցել են Հ.Յ.Դ. Երիտասարդական Միութեան կազմակերպած ջահերով երթին՝ դէպի Ծիծեռնակաբերդ:

• Սկաուտական շարժման հիմնադրման 100ամեակի կապակցութեամբ, Համաշխարհային Սկաուտական Շարժման

կոմիտէի առաջարկով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ Հայփոստ ՓԲԸ-ի հետ համատեղ պատրաստուել է նամականիչ, որը լաւագոյնն է ճանաչուել եւրոպական այլ երկրների սկառուտական կազմակերպութիւնների ներկայացրած նամականիչների մրցոյթում: Նամականիչի շնորհահանդէսը կայացել է Հոկտեմբերի 11ին, Երեւանի «Յիտադել» պիզնէս կենտրոնում կազմակերպուած ազգային ֆիլատելիստական ցուցահանդէսի ընթացքում: Ֆիլատելիստական ցուցահանդէսի հովանաւոր Հայփոստը Հոկտեմբերի 11ը յայտարարել էր Հայաստանի Սկառուտական Եարժման Օրը: Ենորհահանդէսին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը պատրաստել էր սկառուտութեան պատմութիւնն ու աւօրեան ներկայացնող տեսաֆիլմ:

• Նոյեմբերի 5ին, Հ. Հ. պաշտպանութեան նախարարութեան հրահրով Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 50 սկառուտներ մասնակցել են հետախուզական գնդի կազմաւորման 15ամեակի կապակցութեամբ կազմակերպուած միջոցառմանը:

• 2008ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պատուիրակութիւնը մասնակցել է Երեւանի ժող. ինստիտուտում կազմակերպուած հայկական կազմակերպութիւնների ցուցահանդէսին, կազմակերպել եւ ներկայացրել է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը: Ապա մասնակցել՝ Հ.Հ. կառավարութեան շէնքում տեղի ունեցած, Հ.Հ. մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան ֆինանսաւորմամբ, երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի ձեռնարկած «Երիտասարդութիւն, իրականութիւն, հեռանկարներ» խորագրով 2րդ երիտասարդական համաժողովին, մշակել ու ըստ ծրագրի ներկայացրել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը «Մտքերի տօնավաճառ» խորագրով ցուցահանդէսին: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի տաղաւարը ճանաչուել է լաւագոյնը, արժանացել պատուոգրի ու յուշանուէրների:

• «Փիւնիկ» հաշմանդամների միութեան հետ համատեղ, արշաւ է կազմակերպել դէպի Արագած՝ նուիրուած անկախութեան տօնին:

• 2008ին Գիւմրիում տեղի է ունեցել հանդիպում Care կազմակերպութեան վրացի ներկայացուցչի եւ մասնաճիւղի սկառուտների ու աստիճանաւորների միջեւ, ներկայ են եղել նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի խմբապետական խորհուրդի անդամներ: Ներկայացրել է դասախօսութիւն, ապա տեղի է ունեցել քննարկում՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ազրպէյճանի երիտասարդների տարածաշրջանային համագործակցութեան հնարաւորութիւնների շուրջ:

ՄԻՒՔՈՐՆԵՐ

ԵՐԵՒԱՆ

Միաւորում գործունէութիւնն ընթացել է առանց ընդհատումների: Աշխատանք է տարուել երէցական փաղանգի եւ աստիճանաւորների հետ, որի արդիւնքում նկատուում է աշխուժութիւն աստիճանաւորների շրջանում: Միաւորի սկառուտները մասնակցել են վարչութեան եւ խմբապետական խորհուրդի կողմից կազմակերպուած բոլոր միջոցառումներին եւ բանակումն են միջ-միաւորային արշաւներին: 2007ին եւ 2008ին միաւորն անցկացրել է միաւորային բանակումներ: Միաւորի ներկայացուցիչները մասնակցել են համաշխարհային ու միջազգային միջոցառումների:



տական խորհուրդի կողմից կազմակերպուած բոլոր միջոցառումներին եւ բանակումներին, նրանք անցկացրել են միաւորային բանակում, 1 միջ-միաւորային աստիճանաւորական բանակում, 1 չորսօրեայ քայլարշաւ-բանակում, 16 միաւորային արշաւ ու այլ տարբեր ծրագրեր, այդ թւում 16 սկառուտ մասնակցել է ամառնային համատեղ ճամբարի «Հանրապետական մանկապատանեկան կենտրոն» արտադպրոցական կազմակերպութեան հետ: 10ից աւելի սկառուտներ մասնակցել են սկառուտութեան 100ամեակին նուիրուած համաշխարհային բանակումին:

ԱՐՈՎԵԱՆ

Արովեան միաւորում աշխատանքները տարւում են կազմակերպուած: Միաւորի սկառուտները մասնակցել են համահայաստանեան բոլոր միջոցառումներին: Յաճախ կազմակերպուել են արշաւներ ու այլ միջոցառումներ, այցելութիւններ թանգարաններ, այս ամէնը օգնել է ծանօթանալ Հայաստանի տեսարժան վայրերին, պատմութեանն ու աշխարհագրութեանը: Միաւորի սկառուտներից մէկը մասնակցել է Անգլիայում կայացած համաշխարհային բանակումին:

ԱՐՄԱԻՐ

Այս միաւորը եւս համարւում է ամէնաակտիւ միաւորներից: մասնակցել է համահայաստանեան բոլոր միջոցառումներին: Միաւորի պատասխանատուն մասնակցել է Սեպտեմբերի 12-19ը Եւրասիա տարածաշրջանի գրասենեակում կազմակերպուած սեմինարին եւ դրան յաջորդած Եւրասիա տարածաշրջանի համաժողովին:

2007ին միաւորն անցկացրել է միաւորային բանակում: Աշխատանքները անցկացուում են Արմաւիրի եղբ. Վ. Բախշեանի անուան թիւ 2րդ դպրոցում, սակայն ժամանակ առ ժամանակ դպրոցի հետ կապուած խնդիրների պատճառով գործունէութիւնը դպրոցի բակում է կատարւում: Միաւորում գործում է մէկ սկառուտական խումբ եւ մէկ գայլիկական վոհմակ:

Էջմիածին

Այս միաւորն իր աշխատանքը վերականգնել է ընդամէնը երկու տարի առաջ, Բայց արդէն միաւորի սկառուտներն իրենց ակտիւ մասնակցութիւնն են ունեցել համահայաստանեան բանակումներին, ինչպէս նաեւ մասնակցել են խմբապետական խորհուրդի կազմակերպած միջոցառումներին եւ միջ-միաւորային արշաւներին: 2007ին եւ 2008ին միաւորն անցկացրել է միաւորային բանակումներ: Միաւորի ներկայացուցիչները մասնակցել են համաշխարհային ու միջազգային միջոցառումների:

Միաւորի աստիճանաւորների նախաձեռնութեամբ սկառուտական գործունէութիւն է սկսուել նաեւ հարեւան Աթարբեկեան գիւղում, ինչը սա-



կայն, կարճ ժամանակ անց դադարեց-
 ւել է: Ընթացիկ աշխատանքների ար-
 դիւնքում, երբ սկսուտների թիւը 30
 էր, իսկ գայլիկներինը՝ 3, բացուել են
 սկսուտական եւ գայլիկական նոր
 խմբեր, որտեղ ընդգրկուել են 25
 սկսուտ եւ 50 գայլիկ: Գոյվել ենք հա-
 մարում այն փաստը, որ միաւորի պա-
 տասխանատուները կարողացել են
 նուիրատուութեան ճամբով 280 հա-
 զար դրամ հայթայթել եւ լուծել միա-
 ւորի տարագաւորման խնդիրը: տա-
 րագով ապահովուել են 30 սկսուտ եւ
 30 գայլիկ:

Ներկայումս «Վաչէ» միաւորում
 գործում է մէկ գայլիկական վոհմակ
 եւ մէկ սկսուտական խումբ: Պատաս-
 խանատուն եղբ. Գէորգ Կարինեանն է,
 խմբապետական խորհրդի անդամ՝
 եղբ. Արմէն Նազարեանը: Միաւորը
 ունի 10 օժանդակ անդամ: Նկատելի է
 պոտենցիալը՝ միաւորի մեծացման եւ
 աշխատանքներն աւելի օգտակար
 կազմակերպելու ուղղութեամբ:

ՉԱՐԵՆՑԱԻԱՆ

Միաւորի սկսուտները, թէեւ փոքր թուով, մասնակցել են
 համահայաստանեան բոլոր միջոցաւումներին: Միաւորը
 կազմակերպել է մի քանի արշաւ եւ երթ: 2008ի Մարտից գրա-
 սենեակում գործունէութիւնը դադարեցուել է՝ վերանորոգ-
 ման պատճառով: Սեպտեմբերի 7ին տեղի է ունեցել Չարեն-
 ցաւանի միաւորի գրասենեակի բացման եւ անուանակոչու-
 թեան արարողութիւն: Այն անուանակոչուել է միաւորի
 առաջին խմբապետ, Արցախեան ազատամարտում զոհուած
 եղբ. Յակոբ Առուստամեանի անունով: Արարողութեանը
 ներկայ են եղել այդ ժամանակ Հայաստանում գտնուող
 Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներն ու
 սկսուտներ տարբեր միաւորներից: Նոր գրասենեակի առկա-
 յութիւնը ակտիւութիւն է մտցրել միաւորի աշխատանքնե-
 րում, զուգահեռ օգտագործուում է գրասենեակի հարեւանու-



մասնաճիւղի վերահիմնադրումից
 այս կողմ, համեմատաբար կարճ ժա-
 մանակաշրջանի խանդավառ գոր-
 ծունէութիւնից յետոյ, տեղի աշխա-
 տանքները դանդաղել են: Զգալի
 նուազել է սկսուտների թիւը:

Ինչպէս այս, այնպէս էլ գործու-
 նէութեան վայր հանդիսացող
 դպրոցների տնօրէնների հետ կապ-
 ւած խնդիրների պատճառով, տա-
 րեսկզբին Գիւմրի քաղաքի 3 դպրոց-
 ներում եւ Վահրամաբերդ համայնքի
 դպրոցում գործող խմբերի, խմբակ-
 ների փոխարէն, տարվերջին գործու-
 նէութիւն իրականացուել է Գիւմրու
 միայն մէկ դպրոցում՝ վերոնշեալ
 դպրոցների սկսուտների մի մասի
 մասնակցութեամբ:

Չնայած բոլոր դժուարութիւննե-
 րին, մասնաճիւղը պահպանել է իր
 համեմատական ակտիւութիւնը:
 Սկսուտներն իրենց մասնակցու-
 թիւնն են բերել համահայաստանեան
 կառույցի գործունէութեանը: 2007ին

եւ 2008ին կազմակերպուել են միջ-միաւորային աստիճանա-
 ւորական բանակումներ: 1 աստիճանաւորական սեմինար:
 Սկսուտներից չորսը մասնակցել են Անգլիայում կայացած
 համաշխարհային բանակումին: 2008ի Օգոստոսի 24-29ը,
 մասնաճիւղի խմբապետը մասնակցել է համա-Հ.Մ.Ը.Մ.ական
 Տրդ խմբապետական համագումարին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի
 պատուիրակութեան կազմում: Նոյեմբերի 12-19ը մասնաճիւ-
 ղի խմբապետը մասնակցել է Եւրասիա տարածաշրջանային
 գրասենեակում կազմակերպուած «Excel Scout 07» սեմինա-
 րին: Ընթացիկ շրջանում աշխատանք է տարուել նաեւ այլ
 կազմակերպութիւնների հետ: 2007ին Գիւմրիում եւ Երեւա-
 նում մասնաճիւղի սկսուտները մասնակցել են «Արեւորդի»
 առաջին տարածաշրջանային բնապահպանման փառատօնի
 շրջանակներում կազմակերպուած հանրային աշխատանքնե-
 րին:

Տարեշրջանի վերջում աշխատանքները ուղղուել են եղած
 վիճակի կանոնաւորմանն ու մասնաճիւղի վերաշխուժացմա-
 նը: Հանդիպումներ են եղել Գիւմրիի 4 դպրոցների, Մարմա-
 շէն ու Վահրամաբերդ գիւղերի դպրոցների տնօրէնութեան
 հետ: Անդամակցելու ցանկութիւն են յայտնել մի քանի երի-
 տասարդներ: Աշխատանքները արդիւնաւէտ կազմակերպե-
 լու համար, մասնաճիւղի Սկսուտ. Խորհուրդը որոշել է մաս-
 նաճիւղի կազմում ձեւաւորել 2՝ «Գիւմրի» եւ «Վահրամա-
 բերդ» միաւորներ: Այս ընթացքում մասնաճիւղի խմբապետը
 նշանակուել է խմբապետական խորհրդի անդամ:

Ներկայումս մասնաճիւղը իր ղլխաւոր խնդիրը համարում
 է աստիճանաւորների պատրաստումը, 16ից բարձր տարիքի
 յանձնառու երիտասարդներով՝ անդամական կազմի համալը-
 րումը: Լուծուած չէ սեփական գրասենեակի հարցը:



ԳԻՒՄՐԻ
 2 0 0 5
 ԹՈՒԿԱՆԻՆ

ՀՐԱՋԴԱՆ

Միաևորի խմբապետի Հայաստանից բացակայելու պատճառով դադարած գործունեությունը վերսկսուել է նոր աշխուժություններով ու եռանդով:

Արամուս, Ախթալա, Մասիս եւ Վանաձոր միաևորներում գործունեությունը ներկայումս կանոնաւոր կերպով չի ընթանում՝ խմբապետների զբաղուածութեան կամ երկրից բացակայելու պատճառով: Աշխատանքներ են տարւում աւելի կանոնակարգուած գործունեություններն ապահովելու ուղղութեամբ:

ՀԱՄԱՀԱՄԱՐՄԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

-2007 թուականի Սեպտեմբերի 19-23ը Մաղկաձորում տեղի է ունեցել Հ.Մ.Ը.Մ-ի Ծրդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, որի հիւրընկալութիւնը յանձնարարուած էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին: Պատգամաւորական Ժողովի փակմանը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութիւնը նախաձեռնել է ճաշկերոյթ, որն անցել է բարձր մակարդակով, լաւագոյն երգիչ-երգչուհիների մասնակցութեամբ: Ծաշկերոյթի ընթացքում մասնակիցների կողմից եղել են դրամական նուիրատուութիւններ:

-Քոյր մասնաձիւղերի դրութիւնը, ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ գործում է. դրա վառ ապացոյցն է յառաջիկայ բանակումների երկկողմանի հրաւերները:

-Ուրախութեամբ նշում ենք, որ վերջապէս յաջողուել է լուծել տարագաւորման խնդիրը: Միացեալ Նահանգների, Լոնտոնի եւ Գանատայի շրջանների 750ական տոյար նուիրատուութեան արդիւնքում, այժմ կարւում են սկսուողական եւ գայլիկական տարաղներ:

-2008ի Օգոստոսի 24-29ը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի երեք խմբապետներից կազմուած պատուիրակութիւնը մասնակցել է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրդ խմբապետական համագումարին:

-Այս ընթացքում, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան աջակցութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ-ի ու Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան անդամների մասնակցութեամբ տեղի է ունեցել Հայաստանի Ֆիզկուլտուրայի պետական համալսարանի յարաններից մէկի անուանակոչութիւն եւ գիտաթողով, նուիրուած Շաւարշ Քրիսեանին:

ՀԱՄԱԾԵԱՐՀԱՅԻՆ ՄԿԱՌՏՈՒԹԻՒՆ

2007 թ.

1. Յուլիսի 27ից Օգոստոսի 8ը Անգլիայի Չեմսֆորտ քաղաքում տեղի ունեցաւ Համաշխարհային Սկսուողական Շարժման 21րդ բանակումը՝

նուիրուած սկսուողութեան հիմանդրման 100ամեակին: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամներից երկուսը, միւս պետութիւնների ներկայացուցիչների հետ, Պրատուսի կղզիներում, որտեղ տեղի էր ունեցել առաջին բանակումը, դիմաւորել են «սկսուողական արեւածագը»: Համաշխարհային բանակումից առաջ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի պատուիրակութիւնը մէկ օրով հիւրընկալուել է Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի շրջանի բանակավայրում:

Նշենք, որ համաշխարհային բանակումին մասնակցելու յայտ էր ներկայացրել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 23 անդամ, սակայն բրիտանական դեսպանատունը մոտաքի արտօնագիր տուեց միայն 20ին:

2. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի հինգ անդամներ Սեպտեմբերի 12-19ը մասնակցել են Եւրասիա տարածաշրջանի գրասենեակում կազմակերպուած սեմինարին եւ շրջանային համաթողովին: Ժողովի ընթացքում ընտրուել է Եւրասիա տարածաշրջանի նոր կոմիտէ: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը, որպէս Խորհրդի անդամ, առաջարկել է եղբ. Բագրատ Եսայեանի թեկնածութիւնը: Ի ուրախութիւն մեզ, մեր առաջադրած թեկնածուն երեք տարի ժամկէտով ընտրուել է Եւրասիա տարածաշրջանի նախագահ:

2008 թ.

1. Յունուարի 17-23ը Երեւանի միաևորի պատասխանատու եղբ. Արթուր Կարապետեանը մասնակցել է Հ.Ս.Շ. արաբական ռեգիոնի կողմից Շարժաւում կազմակերպուած «Սկսուողութիւն եւ մարդասիրութիւն» թեմայով սեմինարին:

2. Մարտի 7-10, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետուհի քոյր Լիլիթ Զաքարեանը մասնակցել է Սինկափուրում կայացած սկսուող պատասխանատուների հանդիպմանը, որի

հիմնական նպատակը եղել է ներկայացնել Սինկափուրը, որպէս 2015 թուականի համաշխարհային բանակումի անցկացման վայր:

3. Յուլիսի 7-10ը «Վ. Բախշեան» միաևորի խմբապետուհի քոյր Նարինէ Զարդարեանը մասնակցել է Քորէյայում կազմակերպուած համաշխարհային երիտասարդական Ֆորումին եւ համաշխարհային կոնֆերանսին:

4. Օգոստոսի 16-23ը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի խմբապետական խորհրդի անդամ քոյր Նունէ Մարգարեանն ու Երեւան միաևորի պատասխանատու եղբ. Արթուր Կարապետեանը մասնակցել են Եւրասիա տարածաշրջանային գրասենեակում կազմակերպուած «Excel Scout 06» սեմինարին, որի թեման եղել է «Միկրոնտ երեխաների եւ երիտասարդների ինտեգրումը հասարակութեանը»:

5. Նոյեմբերի 12-17ը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի խմբապետական խորհրդի





անդամ եղբ. Կարէն Տէրտէրեանն ու էջմիածնի «Վաչէ» միաւորի աստիճանաւոր քոյր Լենա Շուշանեանը մասնակցել են Եւրասիա տարածաշրջանային գրասենեակում կազմակերպուած «Excel Scout 07» սեմինարին, որի թեման եղել է «Սկաուտութիւնը եւ յատուկ կարիքներ ունեցող երեխաները»:

ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՄԵՐ

• Ձեւաւորուել է յանձնախումբ, որը զբաղւում է սկաուտական կարգերին համապատասխան անհրաժեշտ գիտելիքներն յտակացնելու եւ առանձին զբժոյկներով տպագրելու աշխատանքով:

• Ձեւաւորուել է սկաուտական հրահանգները բարեփոխող յանձնախումբ: Արդիականացուել եւ տպագրուել է հրահանգների գործադրման ձեւերը, որը շուտով կը տեղադրուի կազմակերպութեան կայք էջում տեսաշարքի տարբերակով:

• Ձեւաւորուել են սկաուտական տարեկան ռազմավարական եւ տարեկան կիրակնօրեայ ծրագրերի մշակմամբ զբաղւող յանձնախմբեր: Նպատակը՝ օգնել միաւորներին գոնէ նուազագոյն անհրաժեշտ պահանջներին բաւարարել:

ԿՈՐՈՒՄՏՆԵՐ

Ցառով նշում ենք, որ շրջանը ունեցել է անդառնալի կորուստ: 2008թ.ի ամրանը դժբախտ պատահարի հետեւանքով կեանքից հեռացաւ խմբապետ եղբ. Պերճ Պաստաճեանը: Յուղարկաւորութեանը ներկայ են եղել խմբապետական խորհրդի անդամներ եւ սկաուտներ:

ԸՆԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

• Հաշուետու շրջանում Բիւրականի բանակավայրի վերակառուցման նախագիծ է մշակուել, որով նախատեսուում է բանակավայրը միջազգային սկաուտական չափանիշներին համապատասխան կառուցապատել, 2010 թ. յետոյ:

• Աշխատանքներ են սկսուել 2009 թ. Օգոստոսին կայանայիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ մարզախաղերի իրագործման համար, որոնք տեղի են ունենալու Երեւանում:

• Ծրագրային փուլում է քոյր մասնաճիւղերի համատեղ բանակումը 2009 թ. Յուլիս ամսին:

• Ծրագրային փուլում են գիտելիքային կարգերի նոր դասագրքերի մշակման եւ տպման աշխատանքները:

• Աշխատանքներ են տարւում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կայք էջի բարեփոխման, արդիականացման եւ արտաքին ձեւաւորման ուղղութեամբ:



ԿԱՌՒՄՆԵՐ

2007-2009 թթ. ընթացքում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը 25 տարի ժամկետով վարձակալութեամբ ձեռք է բերել նոր բանակավայր (0.96 հեկտար) Երեւան քաղաքի Նորքի անտառային հատուածում: Այն ծառայելու է որպէս բանակումների եւ սկաուտական գործնական աշխատանքների անցկացման վայր: Պետք է նշել, որ բանակավայրը ձեռք է բերուել ամերիկահայ մի խումբ բարերարների օգնութեամբ, որը պէտք է անուանակոչուի երկար տարիների փորձառու Հ.Մ.Ը.Մ.ական, Ամերիկայի Արեւմտեան շրջանի Շրջանային վարչութեան նախկին անդամ, հանգուցեալ Հայկ Յովսէփեանի անունով:

Այս ընթացքում աւարտին է հասցրուել Չարենցաւանի գրասենեակի վերանորոգման աշխատանքները: Գրասենեակը այժմ դարձել է հրաշալի հա-

ւաքատեղի մեր կազմակերպութեան անդամների համար: Այժմ սպասելիքներ կան, որ կը բարելաւուի միաւորի կազմակերպական փիճակը, միաւորը զգալիօրէն կը համալրուի նոր անդամներով: Գրասենեակն անուանակոչուել է միաւորի առաջին խմբապետ, Արցախեան ազատամարտում զոհուած եղբ. Յակոբ Առուստամեանի անունով:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կենտրոնական գրասենեակում տեղի են ունեցել նորոգութիւններ, սակայն այն կարիքը ունի հիմնական նորոգման եւ կազաֆիկացման, այլապես եթէ այսպէս շարունակուի եւս երկու տարի, հնարաւոր չի լինի աշխատանքները կազմակերպել պատշաճ ձեւով:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Բիւրականի բանակավայրում կատարուել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Հարկ է նշել, որ այն կարիքը ունի մշտական խնամքի, որը կախուած է ֆինանսական մեծ միջոցների առկայութիւնից: Ամենակարեւորն այն է, որ այս տարածքում դեռ եւս 2001թ.ից չի եղել պահակային ծառայութիւն, որը մեծ վտանգ է ներկայացնում բանակավայրի համար: Այժմ բանակավայրը գտնուում է բարւօք վիճակում:

Մշակուել է բանակավայրի վերակառուցման նախագիծ, որով նախատեսուում է 2010 թ. յետոյ բանակավայրը կառուցապատել միջազգային սկաուտական չափանիշներին համապատասխան:

ՍՏԱՑԱՆՔ
ՃԱՆԱՊԱՐՀ
Գրիգոր Դոթոյեան, Թորոնթօ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՄՆԱԾԻԻՂԻ ԱՇԽՈՅԺ ԱՌՕՐԵԱՆ



միջինք, խորովածի օր, պինկոյի օր, Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկուան առիթներով պարահանդէս, երեխաներու կադանդի հանդէս, Ս. Աստուածածնայ տօնին առիթով ուխտազնացութիւն դէպի Պել-ճիբա եւ այլն: Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Ապրիլ 24ի առիթով Հոլանտայի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած ձեռնարկներուն: Սեպտեմբեր 2008ին, մասնաճիւղը իր օժանդակութիւնը բերաւ Հայաստանի անկախութեան տօնին առիթով տեղ-ւոյն «Արամ Մանուկեան» կոմիտէին կազմակերպած խրախմանքին:

Մարզական գետնի վրայ, մասնաճիւղը ունի տղոց ֆութպոլի խումբ մը եւ աղջկանց պասքեթպոլի խումբ մը: Կան նաեւ փինկ-փոնկի հետեւող մարզիկներ:

Սկստուական հաւաքներ տեղի կ'ունենան Կիրակի օրերը կէսօրէ ետք ժամը 2-4:

Մասնաճիւղը 7 սկստուներով մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանսի տարեկան բանակումին (Յուլիս 2008): Իր կարգին, մասնաճիւղը ունեցաւ եռօրեայ բանակում մը: Մասնաճիւղի խմբապետ եղբ. Ճորճ Մատատողեան իր մասնակցութիւնը բերաւ համա-Հ.Մ.Ը.-Մ.ական խմբապետական Ե. համազումարին (Հայաստան, Օգոստոս 2008): Հինգ արեւոյններ մասնակցեցան Հոլանտայի սկստուական ֆետերասիոնին կազմակերպած գիտելիքներու դասընթացը-բանակումին:

15 Փետրուար 2009ին մասնաճիւղը գումարեց իր անդամական ընդհանուր ժողովը եւ ընտրեց նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.- քոյր Յասմիկ Օհանեան (ատենապետ), եղբայրներ Օհաննէս Օհաննէսեան (ատենադպիր), Մարգիտ Տէր Ղազարեան (գանձապահ), Ազատ Պողոսեան (հաշուապահ), Բաֆֆի Ամիրխանեան, Սեւան Կորկիսեան եւ Ասլան Ասլանեան (խորհրդականներ):

Հ.Մ.Ը.Մ.ի Ամբերդի մասնաճիւղը արդէն իսկ 13 տարեկան է: 1996ին հիմնուած այս մասնաճիւղը այսօր կը հաշուէ 109 անդամ: Անցնող տարեշրջանին, մասնաճիւղը ունէր եօթնանգամ վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէ-քոյր Յասմիկ Օհանեան (ատենապետուհի), եղբայրներ Վարդան Պողոսեան (փոխ ատենապետ), Օհաննէս Օհաննէսեան (ատենադպիր), Միսաք Վարդանեան (Գանձապահ), Մարգիտ Տէր Ղազարեան (հաշուապահ), Բաֆֆի Օհանեան եւ Նշան Շահինեան (խորհրդականներ):

Վարչութեան կողքին, մասնաճիւղը ունի Սկստու. Խորհուրդ, մարզական յանձնախումբ, տեղի հարցի յանձնախումբ եւ տիկնանց յանձնախումբ, որոնք տարեկան կը կազմակերպեն զանազան ձեռնարկներ՝ մարզական եւ սկստուական հանդէս, մայրերու տօն,





ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎՆԱՐԿ ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.- Հ.Մ.Մ.Ի ԱՆՅՆՈՂ ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԿՈՒԹԵԱՆ

4 Մարտ 2009ին Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.- Հ.Մ.Մ.Ի մասնաճիւղը գումարեց անդամական իր 70րդ ընդհանուր ժողովը եւ ընտրեց նոր վարչութիւն: Ժողովին ներկայացուած տեղեկագիրը հարազատ պատկերը փոխանցեց մասնաճիւղին անցնող մէկ տարուան գործունէութեան, որ առաւելարար յատկանշուած է ակումբի վերանորոգութեամբ:

Արդարեւ, Հայկազ Թահմազեանի բարերարութեամբ, մասնաճիւղը ձեռնարկած է իր ակումբին վերանորոգութեան: Աշխատանքներուն առաջին մասը ամբողջացած է: Երկրորդ փուլի աշխատանքներուն համար կը փնտուռի նոր նուիրատու:

Հ.Մ.Ը.Մ.- Հ.Մ.Մ. ունի ֆուլթայլի երէցներու եւ կրտսերներու խումբեր: Երէցներու խումբին մարզումը վստահուած է եղբ. Վազգէն Պոտիկեանին, իսկ կրտսերներու խումբին մարզումը՝ եղբ. Նազօ Թերզեանին: Անցնող տարի, մասնա-

ճիւղը հիւրընկալած է Լոնտոնի AYA ֆուլթայլի խումբը, որուն հետ ունեցած է բարեկամական մրցումներ:

Իբրեւ նորութիւն, մասնաճիւղը կազմակերպած է տօնավաճառ, ինչ որ գտած է մեծ յաջողութեամբ: Ընկերային ձեռնարկները պսակուած են մեծ յաջողութեամբ: Նոր Տարուան աւանդական պարահանդէսին Լիբանանէն հրաւիրուած է երգիչ Մանուկ Մինասեան, ընկերակցութեամբ Սեղօ Պաղտասարեանի եւ իր նուագախումբին:

Մասնաճիւղին տարեկան պարահանդէսին Հայաստանէն հրաւիրուած է երգիչ Արսէն Գրիգորեան: Պաշտօնական հիւրերու շարքին, պարահանդէսին ներկայ գտնուած են Կիպրոսի խորհրդարանի նախագահ Մարիօ Կարոյեան, Կիպրոսի ելեմուտքի նախարար Խատիրլաոս Սթաւրակիս եւ կիպրահայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան:

Ամսական դրութեամբ, մասնաճիւղը ակումբէն ներս կազմակերպած է վիճակահանութեան երեկոներ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅՆՃԱՐԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԻ ԵՐԷՑ-ՊԱՐՄԱՆՈՒՀԻՆԵՐՈՒ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

Թղթակից ԱՅՆՃԱՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Խմբապետութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 7 եւ Կիրակի, 8 Մարտ

2009ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցաւ Այնճարի մասնաճիւղի երէց-պարմանուհի փաղանգներու նախապատրաստական ծրագիրին երկրորդ հանգրուանի սեմինարը:

Սեմինարին ընթացքին դասախօսե-

ցին եղբայրներ Վիգէն Աւագեան, Ժանօ Քէչէճեան, Հրայր Մարգարեան եւ քոյր Իրմա Ճէրէճեան: Մասնակից սկաուտները այս առիթով դիտեցին «Երկիր Մետիա»-ի կողմէ պատրաստուած տե-

սերիզ մը, որ կ'անդրադառնար Հայաստանի Ա. Հանրապետութեան:

Դաստիարակչական աշխատանքներուն կողքին, երէց-պարմանուհիները հետեւեցան կարգապահական վարժու-

թիւններու, մարզական խաղերու եւ մարզանքներու:

Երկօրեայ սեմինարի աւարտին, մասնակիցներուն յանձնուեցան համապատասխան հաստատագիրներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐԻԱԿԱՆ ՃԻԼԴԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒԹ ԶԻԲՆԻ ԲԱՆԱԿՈՒՄ

Թղթակից ՊԵՅՐՈՒԾ



արաթ, 7 եւ Կիրակի Մարտ 2009ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Խմբապետութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ արիական ճիւղերու երկօրեայ ճիւղի բանակում՝ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրճ Համուտի, Պէյրութի, Ժըտէյտիի եւ Այնճարի մասնաճիւղերու արիական խումբե-

րուն:

Բանակումին մասնակից արի սկաուտները հետեւեցան յատուկ ծրագիրի, որուն ընթացքին անոնք ունեցան գիշերային արշաւ եւ ճիւղէ տնակներու (իկլունբրու) կառուցում: Մասնակիցները կատարեցին նաեւ ձեռային շարք մը աշխատանքներ, դրօշակի արարողութիւն եւ խաղեր:




Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային



Խմբապետութեան արիական ճիւղերու երկօրեայ ճիւղի բանակումին մասնակցեցան 80 արիներ, որոնք սկաուտական առողջ մթնո-

լորտի մէջ վերաթարմացուցին իրենց գիտելիքները եւ ստացան նոր տեղեկութիւններ, որոնք պիտի ծառայեն սկաուտական իրենց հետագայ աշխատանքներուն:

Jewelry Burs from FOX! All shapes, all sizes!
Here are just a few!



2245 E. Colorado Blvd. 104-240
Pasadena, CA 91107 USA
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN
Tel: 626-791-4327
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՆ ՏԻԷԿՈՅԻ «ՍԵԻԱՆ» ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԴԱՅԻՆ 24ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Մարտ Բեշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի մարզական կեանքը միշտ ալ եռուն եղած է: Ամէն շաբաթավերջ, առանց բացառութեան, մասնաճիւղերը կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի կամ տեղական լիկերու մարզական այս կամ այն մարզաճիւղի մրցումներուն: Երեւոյթ մը, որ մեծապէս գնահատելի է յատկապէս ծնողներուն կողմէ, որոնց զաւակները ակամայ մաքուր միջավայրի մը մաս կը կազմեն: Նման շաբաթավերջ մըն էր նաեւ 14-16 Փետրուար 2009ի երկար շաբաթավերջը:

Մինչ Կլէնտէյլի մէջ կը շարունակէին Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մրցումները (ՔԱՀԱՄ), նոյն օրերուն, Սան Տիէկոյի «Էլիքսթի Ինթերնէշնըլ Իւնիվերսիթի»ի վեց մարզաղաշներուն



Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» եւ «Անի» մասնաճիւղերու վոլիպոլի խումբերը:

վրայ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղին պասքեթպոլի միջ-մասնաճիւղային 24րդ մարզախաղերը:

գերէն, ինչպէս նաեւ վոլիպոլի աղջկանց երեք խումբեր, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելէսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի «Մասուուն», Մոնթեպելլոյի, Փասատինայի «Ազատամարտ», Կլէնտէյլի «Արարատ», Օրէնճ Քաունթիի «Սարգարապատ», Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս», Սան Տիէկոյի «Սեւան», Սանթա Գլարայի «Անի», Քրեսենթա Հովիտի «Շանթ», Պրոպէնքի «Սիփան» եւ Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղերէն:

Զուարթ էր միջնոյրտը, ուրախ էին ծնողներն ու մրցումներուն հետեւող մարզասէր հասարակութիւնը: Ցատկապէս խանդավառ էր կազմակերպիչ մասնաճիւղին վարչութիւնը, որուն ատենապետուհի քոյր ժամէթ Մանուշակեանի հաստատումով. «Նման մարզախաղեր մեծապէս կը նպաստեն մեզի պէս փոքր մասնաճիւղերու աշխուժացման: Այս տարի մեծ ոգեւորութեամբ կը մասնակցինք այս մարզախաղերուն, որովհետեւ հպարտ եմ ըսելու, թէ երեք խումբերով կը ներկայանանք մէկ ԱԱ.



Պասքեթպոլի աղջկանց Ա. դասակարգի «Արարատ» եւ «Մասիս» մասնաճիւղերու մրցումէն պահ մը:

եւ երկու Ա. դասակարգի խումբերով: Մեծ աշխատանք կը տանինք բազմացրնելու մեր մարզիկներուն թիւը: Ուրախ ենք, որ քոլէճի բազմաթիւ ուսանողներ միացած են մեզի եւ կը մասնակցին մասնաճիւղի այս մեծագոյն ձեռնարկին:

«Շրջանի երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ համախմբելու հեռանկարով այս տարի ծրագրուած է զարկ տալ պէյսպոլի, պոլինկի, փէյնպոլի եւ ընկերային այլ ձեռնարկներու կազմակերպման: Կը մտածուի նաեւ կազմել աղջկանց պասքէթպոլի խումբ մը»:

Հագիւ 110 անդամ հաշուող «Սեւան» մասնաճիւղի կազմակերպած այս տարւան մրցումները արտասովոր եռուզեռի մէջ էին: Մրցումներուն կազմակերպման մէջ իր առիժի բաժինը բերաւ Շրջանային մարզական խորհուրդը եւ յատկապէս խորհուրդի երկար տարիներու ատենապետուհի քոյր Նայիրի Տէրտէրեան, որ մարզախաղերու ամբողջ տեւողութեան բծախնդրութեամբ հետեւեցաւ մրցումներու յաջող ընթացքին: Քոյրը ոգեւորութեամբ փոխանցեց, թէ «Մարզախաղերու կազմակերպիչ մասնաճիւղը երկար տարիներէ ի վեր միայն պասքէթպոլի մէկ խումբով կը մասնակցէր այս մրցումներուն, սակայն վարչութիւնը եւ իր երիտասարդ մարզական պատասխանատուն անցնող տարեշրջանին մեծ ճիգեր թափելով յաջողած են այս տարի պասքէթպոլի երեք խումբերով մասնակցիլ: Երեւոյթ մը, որ մեծապէս քաջալերական եւ յուսադրիչ է: Նոյնն է պարագան Հ.Մ.Ը.Մ.ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղին, որ մեծ ուստում արձանագրեց մարզական կեանքէն ներս եւ այս տարի պասքէթպոլի երկու խումբով մասնակցեցաւ մարզախաղերուն եւ Ա. դասակարգի մէջ զրաւեց երրորդ տեղը:

«Շրջանային մարզական խորհուրդը մեծապէս կը քաջալերէ նման մարզախաղեր եւ իր առաւելագոյնը կը մատուցէ այն բոլոր մասնաճիւղերուն, որոնք միջ-մասնաճիւղային մարզախաղերու կազմակերպման կարիքը ունին»:

Մարզախաղերուն մօտէն հետեւե-



ցան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան մարզական պատասխանատու եղբ. Ժանօ Գահվէճեան, եղբայրներ Բաֆֆի Խաչատուրեան եւ Վարդգէս Շիրտումեան: Զգալի էր նաեւ մասնաճիւղերու մարզական պատասխանատուներուն եւ մարզիչներուն ցուցաբերած գուրգուրանքը մրցող մարզիկ-մարզիկուհիներուն հանդէպ:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ԱԱ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Լոս Անճելըս (2) մասնաճիւղ
- 2.- Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
- 3.- Լոս Անճելըս (1) եւ Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղեր

Ա.-1 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Օրէնճ Քաունթիի «Սարդարապատ» (2) մասնաճիւղ
- 2.- Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ
- 3.- Կլէնտէյի «Արարատ» (2) եւ Լոս Անճելըս (1) մասնաճիւղեր

Ա.-2 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Քրեսենթա Հովիտի «Շանթ» (2) մասնաճիւղ
- 2.- Կլէնտէյի «Արարատ» (2) մասնաճիւղ
- 3.- Լաս Վեկասի «Արցախ» եւ Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» (1) մասնաճիւղեր

Ա.-3 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» (1) մասնաճիւղ
- 2.- Կլէնտէյի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 3.- Սան Տիէկոյի «Սեւան» (1) եւ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղեր

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Քրեսենթա Հովիտի «Շանթ» (1) մասնաճիւղ
- 2.- Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
- 3.- Քրեսենթա Հովիտի «Շանթ» (2) եւ Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Կլէնտէյի «Արարատ» (2) մասնաճիւղ
- 2.- Փասատինայի «Ազատամարտ» (2) մասնաճիւղ
- 3.- Քրեսենթա Հովիտի «Շանթ» եւ Կլէնտէյի «Արարատ» (1) մասնաճիւղեր

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ

- 1.- Կլէնտէյի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 2.- Սան Ֆեռնանտօ «Մասիս» մասնաճիւղ
- 3.- Փասատինայի «Ազատամարտ» (1) եւ Կլէնտէյի «Արարատ» (2) մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ

- 1.- Կլէնտէյի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 2.- Կլէնտէյի «Արարատ» (2) մասնաճիւղ
- 3.- Փասատինայի «Ազատամարտ» եւ Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» մասնաճիւղեր

ՎՈՒԽՈՂ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ

- 1.- Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
- 2.- Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» (1) մասնաճիւղ
- 3.- Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» (2) մասնաճիւղ



43 ԽՈՒՄԲԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՐԵՁՆՈՅԻ «ՄԱՍՈՒՆ» ՄԱՍՆԱԾԻԲՂԻ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ

Մարտ Բեշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

2 1-22 Մարտի շարաթավերջին դարձեալ եռուգեռի մէջ էր Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆրեզնոյի ընտանիքը, որ ուրախութեամբ հիւրընկալեց Հ.Մ.Ը.Մ.Ի Քրեանկայի չորս Հովիտի «Շանթ», Կլէնտէյի «Արարատ», Փաստտինայի «Ազատամարտ», Լոս Անճելոսի, Սան Ֆրանսիսքոյի «Մասիս», Պրրպէնքի «Սիփան», Սան Ֆրանսիսքոյի եւ Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղերու Դ. եւ Զ. դասակարգերու պասքեթպոլի 43 երկսեռ խումբերը (upper-lower), իրենց ծնողներուն ընկերակցութեամբ:

Ֆրեզնոյի հայկական գաղութին համար կարեւոր նշանակութիւն ունին երկօրեայ միջ-մասնաճիւղային այս մարզախաղերը, որոնք ոգեւորութիւն եւ եռանդ կը ներշնչեն շրջանէն ներս:

Ֆրեզնոյի տեղական երկու վարժարաններու մարզադաշտերուն վրայ տեղի ունեցող այս մարզախաղերը կազմակերպուած էին բժախնդրութեամբ, որուն հետեւանքով ալ անոնք հեզասա՛հ ընթացան: Տիրող մարզական մաքուր ու մտերմիկ մթնոլորտը ոչ միայն մարզադաշտերուն վրայ կը տիրապետէր, այլ նաեւ՝ մրցող խումբերը քաջալերող ծնողներուն եւ մարզասէրներուն մօտ, որոնց ուրախ բացազանջութիւնները առաւել կը խանդավառէին եւ կ'ոգեւորէին մրցող խումբերը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղը Արեւմտեան Մ. Նահանգներու հնագոյն մասնաճիւղերէն է, որ հիմնուած է 1971ին: Կը ղեկավարուի եօթը հոգինոց վարչական կազմի մը կողմէ:

Մասնաճիւղին անուանացանկը կը բաղկանայ շուրջ 280 անդամներէ, որոնց աւելի քան 150ը գործօն անդամներ են: Մարզական թեւը ունի պասքեթպոլի տասը եւ ֆութպոլի երկու երկսեռ խումբեր, իսկ սկաուտական թեւը կը հաշուէ 50 արի-արենոյձներ ու գայլիկ-արծուիկներ, որոնք կը ղեկավարուին Սկաուտական Խորհուրդին կողմէ:

Մասնաճիւղը ունի աշխոյժ ընկերային յանձնախումբ մը, որ տարեկան գլխաւոր ձեռնարկը նկատուող պարահանդէսէն բացի, կը կազմակերպէ ընկերային զանազան ձեռնարկներ, որոնք նիւթական ապահովելէն անդին, առիթ կը հանդիսանան համախմբելու երիտասարդութիւնը:

Յատկանշական է մասնաճիւղէն ներս տիրող համերաշխ

մթնոլորտը, որուն կենդանի օրինակը մարզախաղերու ընթացքին մարզադաշտերու մուտքերուն հրամցուող ճաշերու պատրաստութիւնն ու վաճառքն էր: Քանի մը տասնեակ քոյր-եղբայրներ ժպտադէմ կը հիւրընկալէին ներկաները՝ անմիջական եւ համեղ ուտելիքներ պատրաստելով ու հրամցնելով դիմողներուն:

Մասնաճիւղի ատենապետ եղբ. Ժանօ Քէրքէզեանի հաստատումով՝ «Կասկած չկայ, թէ միջ-մասնաճիւղային այս մարզախաղերը մեծ ոգեւորութիւն կը ստեղծեն մասնաճիւղէն ներս: Ասկէ անկախ, մասնաճիւղէն ներս մեծ հետաքրքրութիւն ստեղծած է Մ. Մնունդի աւետումը, որուն այս տարի ամբողջ մասնաճիւղը մասնակցեցաւ: Մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ այցելեցին հայ ընտանիքները եւ «Խորհուրդ Մեծը» խմբերգեցին անոնց: Այս նախաձեռնութիւնը յատկապէս մեծ խանդավառութիւն ստեղծեց մասնաճիւղէն ներս»:

Առաջին օրուան գտումի մրցումներէն ետք, յաջորդ օր, աւելի հետաքրքրական ընթացան կիսաւարտական եւ մանաւանդ ավարտական մրցումները: Ընդհանրապէս հաւասար ուժերով ընթացող մրցումները իրենց արագութեամբ եւ զեղեցիկ խաղարկութեամբ ելեկտրականացած մթնոլորտ մը ստեղծեցին մարզադաշտերուն վրայ: Յատկապէս հաճելի էր իւրաքանչիւր մրցումէ ետք ողջագուրուող խումբերու պատկերը: Հուռուներու եւ երկար ծափողջոյններու ընկերակցութեամբ յանձնուեցան յաղթանակի բաժակները, իւրաքանչիւր ավարտական մրցումէ ետք:

Մարզախաղերը վերջ գտան Կիրակի, 22 Մարտ 2009ի կէսօրէ ետք ժամը 5ին: Մասնակիցները անմոռանալի յիշատակներով մեկնեցան տուն՝ Նաւասարդեան մարզախաղերուն դարձեալ հանդիպելու ականկալութեամբ:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՐԴԻԲՆՔՆԵՐԸ

ՊԱՍՔԵԹՊՈԼ

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՂՋԻԿՆԵՐ (Lower)

- 1.- Հ.Մ.Ը.Մ.Ի Պրրպէնքի «Սիփան» մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյի «Արարատ» (1) եւ Քրեանկայի չորս Հովիտի «Շանթ» (2) մասնաճիւղեր

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՂՋԻԿՆԵՐ (Upper)

- 1.- Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.Ի Քրեանկայի չորս Հովիտի «Շանթ» մասնաճիւղ

3.- Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» (2) եւ Լոս Անճելըսի մասնաճիւղեր

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՆՁԵՐ (Lower)

- 1.- Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» (2) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ.ի Պըրպէնքի «Սիփան» եւ Լոս Անճելըսի մասնաճիւղեր

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՆՁԵՐ (Upper)

- 1.- Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» (3) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ.ի Քրեսէնթա Հոլիտի «Շանթ» (1) եւ Կլենտէյլի «Արարատ» (3) մասնաճիւղեր

Ե. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՂՋԻԿՆԵՐ

- 1.- Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Քրեսէնթա Հոլիտի «Շանթ» մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» (2) եւ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղեր.

Ե. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՆՁԵՐ (Lower)

- 1.- Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի (1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հոլիտի «Մասիս» եւ Փասատինայի «Ազատամարտ» (1) մասնաճիւղեր

Ե. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՆՁԵՐ (Upper)

- 1.- Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ.ի Քրեսէնթա Հոլիտի «Շանթ» մասնաճիւղ

ՄՍԱՑԱՆՔ

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՍՊԱՌ-ԱՂԲԻԻՐ՝ Հ.Մ.Ը.Մ.

(ԲՈՒԷՅԹ 1983-2008)

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Բուէթի մասնաճիւղի վարչութեան: Ընդհանուր պատասխանատու՝ Յարութ Պետիրեան, գլխաւոր խըմբագիր՝ Սարալ Յամպոյեան, խմբագրական կազմ՝ Ժան Պէպէճեան, Կարօ Յ. Արսլանեան եւ Յովհաննէս Սերոբեան: 248 էջ:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Studio VICKEN 2005 PARIS



ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ԾԵՐԱՆՈՑ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

**Քրիստինա Սաֆարեան
Թամար Ղարիպեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ**

Տարեկան իրենց սովորութեան համաձայն, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելլասի մասնաճիւղի սկաուտները այս տարի եւս այցելեցին Միշըն Հիլզի «Արարատ» ծերանոցը: Երգի, պարի եւ բանաստեղծութեան միջոցով անոնք ուրախ միջնորդատ ստեղծեցին տեղւոյն հայրիկներուն ու մայրիկներուն: Սկաուտները երբ իրենց ծրագրած ներկայացումները ամբողջացուցին, կարգը եկաւ ծերանոցի անդամներուն՝ պատանեկան օրերէն իրենց սորված հին արտասանութիւններն ու երգերը ներկայացնելու: Նաեւ, յատուկ ժամանակ տրուեցաւ սկաուտներ-



րուն, որպէսզի ծանօթանան եւ զրուցեն իրենց երէց հայրենակիցներուն հետ: Երբ այցելութեան աւարտը հասաւ, սկաուտները ցտեսութիւն ըսին, բոլորին մաղթելով առողջութիւն, յաջողութիւն եւ երկար տարիներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊՏՈՅՏԸ

**Մարալ Հինտոյեան
Ճուլիանա Խանձեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ**

Լոս Անճելլասի մասնաճիւղի խմբապետական կազմը տարեկան սովորութիւն դարձուցած է միութենական տարեշրջանի սկիզբը ճամբորդել գանազան քաղաքներ՝ սկաուտական յաջորդ տարուան ծրագիրը պատրաստելու համար: Ամէն տարի պտոյտը կը կազմակերպէ մասնաճիւղին գերագոյն կազմը: Այս տարի, մեր ստացած նոր աստիճաններով, ուրախութեամբ ու անհամբերութեամբ կը սպասէինք 2009ի պտոյ-



տը, եւ առաջին անգամ ըլլալով մաս կազմել խմբապետական մարմնին: Չմտածեցինք բուն խմաստը այս պտոյտին, որ յայտագիր կազմելու, մեր խումբերուն ու խմբապետին օրէնքները սորվելու կողքին, մաս կազմել էր այդ քոյր եղբայրներու խումբին՝ խմբապետական կազմին, որուն կը փափաքէինք հասնիլ մեր փոքր տարիքէն:



Մեր մասնաճիւղին խմբապետը՝ եղբ. Անդրէաս Հինտոյանը փորձեց մեզմէ գաղտնի պահել այս տար-ւան պտոյտին վայրը, մինչեւ որ մեր միաւորին խմբապետը... սխալմամբ յայտնեց, որ Քալիֆորնիոյ Սան Ֆրանսիսքօ քաղաքը պիտի ճամբորդէինք: Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու ընթացքին այցելած էինք Սան Ֆրանսիսքօ, բայց մեր պարտականութեան բերումով գիտցանք որ տարբեր պիտի զգանք ու նոր յուշերով պիտի վերագառնանք Լոս Անճելըս քաղաք: Նաեւ, նոյն պահուն

խմացանք, որ մեր միաւորի խմբապետուհիներէն քոյր Նանօր Տէյրմէնճեանը պիտի հեռանայ մեր մասնաճիւղէն եւ մաս պիտի կազմէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ այս պիտի ըլլայ մեր վերջին խմբապետական աշխատանքը իր հետ:

Մեր ճամբորդութիւնը սկսելէ եօթը ժամ ետք, վերջապէս հասանք մեր հիւրանոցը: Հրահանգուած էր ժամը Տին պատրաստ ըլլալ ժողովի: Բոլոր խմբա-

պետներն ու աստիճանաւորները ներկայ էին: Պատրաստեցինք մեր եռամսեայ յայտագիրը եւ որոշեցինք մեր խումբերուն տարուան ծրագիրները: Արդէն բաւական էր որոշեցինք քննալ ու հանգստանալ, որովհետեւ շաբաթավերջը պիտի յատկացուէր ուրախ ժամանցի:

Սան Ֆրանսիսքօ նշանաւոր է գանազան պատմութիւններով եւ տեսարժան վայրերով: Մենք այցելեցինք զբօսաշրջիկական բոլոր վայրերը, ինչպէս՝ Ալքաթրադ, Ֆիշըրմէնզ Ուարֆ, Չայնաթաուն, Լոմպարտ ուոտ, Կոլտըն Կէյթ Պրիճ, Իւնիոն սքուէր եւ Կիրատելլի սքուէր: Մեր բոլորին համար անակնկալ էր Սան Ֆրանսիսքոյի անոյշ օդին գեղասահք ընելը: Ընդանուր առմամբ կրնանք ըսել, որ այս պտոյտը մեզ միացուց եւ մտերմացուց, իբրեւ իսկական քոյր-եղբայրներ:



**Sarkis
or
Paul**

SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouyantools.com

E-mail: info@sassouyantools.com

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՄԸ՝ ԵՂԲԱՅՐ ՎԱՐՈՒԺ ԳԷՈՐԳԵԱՆՆ

Գեորգ Գարապոյաձեան ՊՈՒՐԾ ՅԱՄՈՒՏ

Ո՞վ էր եղբ. Վարուժ Գեորգեանը: Պուրճ Համուտի մէջ ծնած, Հ.Մ.-Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին մէջ հասակ նետած, Հ.Մ.Ը.Մ.ականի մտքով ու հոգիով դաստիարակուած, մարմնով կրթուած, Հ.Մ.Ը.Մ.ական տիպար մարզիկ մը, որ քառասուն երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայեց իբրեւ աթլէթի խումբի մարզիչ եւ յանձնախումբի անդամ:


Եղբայր Վարուժ Գեորգեանի համար նպատակը տկարութիւն էր ճանչնար: Լիբանանի քաղաքացիական երկար տարիներու դժուար պայմաններուն մէջ ան երբեք չյուսահատեցաւ, այլ ընդհակառակը՝ աւելի աշխատեցաւ, աւելի զոհուեցաւ եւ կիրակի առաւօտները տուներէն մարզիկներ հաւաքելով՝ հսկեց անոնց ժամը 7ի փորձերուն: Լիբանանի աթլէթիզմի ախտեանութիւններուն աշխատեցաւ առաւելագոյն թիւով Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներով առաջնութիւններ խլել:

Իր արդարամտութեամբ, աշխատասիրութեամբ եւ զոհողութեամբ, եղբ. Վարուժ յաջողեցաւ մաս կազմել Լիբանանի աթլէթիզմի Ֆետերասիոնին, եւ երկար տարիներ եղաւ անոր փոխ նախագահը:

Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի ջահերը ձեռքերուն, եղբ. Վարուժ իբրեւ պատասխանատու եւ մարզիչ հասաւ մինչեւ հեռաւոր Գանատա, Եւրոպա, Ափրիկէ եւ Ծայրագոյն Արեւելք: Մարզիկներուն արձանագրած յաջողութիւնները միշտ իրը կը նկատէր ան, եւ կարծես անոնց ստացած մետալները իր վրիզին էր որ կ'անցնէին:

Իր մարզական ծառայութիւններուն զուգահեռ, եղբ. Վարուժ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին ներս եղաւ նոյնքան գործունեայ, մաս կազմելով Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի վարչութեան, իբրեւ անդամ եւ ատենապետ, ու քանի մը շրջան իբրեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ աթլէթիզմի ներկայացուցիչ: Յիսուն տարիներու միութենական իր կեանքին ընթացքին, ան միշտ մտահոգուած էր ապագայով եւ նոր սերունդներ պատրաստելու հեռանկարով: Իբրեւ մարզիկ, մարզիչ թէ վարչական, ան փորձած էր իրեն յանձնուած ջահը աւելի բոցավառ վիճակով փոխանցել գալիք սերունդին:

Միշտ ալ դիւրին եղած չէ եղբայր Վարուժ Գեորգեանին հետ գործակցելը, որովհետեւ ան իր անձնական շահը մոռնա-



լով ու զոհելով կը պայքարէր արդարութեան կողքին: Ունեցած է տարակարծութիւններ եւ անհամաձայնութիւններ, սակայն ի շահ միութեան: Ան եղած է զիջող եւ գործակցող:

Հակառակ եղբայր Վարուժ Գեորգեանի ունեցած կարողութիւններուն, անոր համար անձանօթ էին փառքն ու դիրքը, որովհետեւ աւելի հաւատացող էր սեւ աշխատանքին՝ քան ճառախօսութիւններուն: Ան շատ անգամ մերժած էր ուրիշներու համար ցանկութիւն եղող պաշտօններ, իսկ ընդունելու պարագային՝ միայն պարտադրանքով կամ հրահանգով:

Ան չէր սիրեր եւ միշտ կը խուսափէր մեծարուելէ, գոյն նկատելով

վերջակէտ մը միութենական իր ծառայութեան:

Ահաւասիկ միութենական եւ կուսակցական բարձր արժանիքներով օժտուած եղբ. Վարուժ Գեորգեանը, որուն հրաժեշտ տուինք մեծ կսկիծով: Եղբայր Վարուժը եւ իր նմանները սակայն չեն մահանար, որովհետեւ երբ անոնք մահանան, մահացած կ'ըլլայ անոնց ապրած նուիրումի, ծառայութեան եւ զոհողութեան կեանքը: Միաժամանակ մահացած կ'ըլլանք մենք, մեր գաղափարախօսութիւնը եւ մեր միութիւնը:

Օր մը, միութենական հարցերու շուրջ տարակարծութեան մը ընթացքին, երէց եղբայր մը հարց տուաւ ըսելով. «Եթէ եղբայր Վարուժը կայ, Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ական աթլէթ կայ, իսկ եթէ եղբայր Վարուժը չկայ, աթլէթ չկա՞յ»: Այո՛, եթէ եղբայր Վարուժը չկայ, աթլէթ չկայ: Բայց փաստօրէն, այսօր, եղբայր Վարուժը չկայ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ական աթլէթ կ'ա՛յ: Աթլէթ կայ ու պիտի ըլլայ մինչեւ այն ատեն, որ կան եղբայր Վարուժի նման ծառայելու եւ անսակարկ նուիրումով աշխատելու պատրաստակամութիւնը ունեցող Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ:

Միութենական մեր բոլոր կառույցները, ըլլայ աթլէթ, պասքէթ, Ֆութպոլ, հեծելաբշտ, փինկ-փոնկ, ԼԵՎԱՄ թէ սկաուտութիւն, հետզհետէ կը տկարանան, իսկ փլուզումէ փրկելու միակ ձեւը նոր սերունդը եղբ. Վարուժ Գեորգեանի նման օրինակելի ու նուիրական կեանք ապրած եղբայրներու օրինակով դաստիարակելն է, այսօր եւ վա՛ղը:

Թող շիրմիդ ցուրտ հողը թեթեւ կշռէ վրագ, անգին եղբայր:

ԵՂԲ. ՎԱՐՈՒԺ ԳԷՈՐԳԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ.Ս.Ը.Ս.Ի Լիբանանի Շրջանային Վարչութիւն ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

Հ.Ս.Ը.Ս.Ի Լիբանանի մեծ ընտանիքը երկու ամիս առաջ սրտի դառն կսկիծով Պուրճ Համուտի Ազգային Գերեզմանատան ցուրտ հողին յանձնեց մարմինը եղբ. Վարուժ Գեորգեանին:

Ո՞վ էջր ճանչնար եղբ. Վարուժը: Համեստ ու խոնարհ այս եղբայրը, որ Հ.Ս.Ը.Ս.ի ակադեմիայի ակադեմիկոս ծառայութեան 50 տարիներու վաստակ մը ձգած էր իր ետին: Եղբ. Վարուժ փոքր տարիքէն մաս

կազմած է Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Համուտի գայլիկական խումբին, ապա մաս կազմած է աթլէթի խումբին՝ նոյն ժամանակ հետեւելով մարմնամարզի փորձերու:

Իր երկարամեայ ծառայութեան եւ միութենական վաստակաշատ գործունէութեան համար (Շրջանային Վարչութեան աթլէթի յանձնախումբի անդամ, Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան անդամ, Շրջանային Վարչութեան անդամ, Լիբանանի աթլէթի ֆետերասիոնի անդամ եւ փոխ նախագահ), 22 Նոյեմբեր 2008ին, Հ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութեան 90ամեակի հանդիսութեան ընթացքին, Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ ան պարգևատրուեցաւ «Ծառայութեան»

չքանչանով:

Մէկը, որ տուաւ առանց փոխարէնը պահանջելու: Նուիրեալ մը, որ իր երիտասարդութեան տարիներուն ոսկի էջեր տուաւ լիբանանեան աթլէթի մարզաշխարհին, յաղթանակներով զարգարեց դաշտերը եւ խինդով վարակուած սերունդներ հասցուց Հ.Ս.Ը.Ս.ի յաջողութիւններու բարձունքին:

Եղբ. Վարուժի Հ.Ս.Ը.Ս.ական վաստակը կարելի է խտացնել քանի մը տողերու մէջ: Իր գործունէութիւնը յաւէտ պիտի յիշուի միութեան պատմութեան մէջ:

Թող հողը թեթեւ դայ վրադ: Հաւատա՛, սիրելի եղբ. Վարուժ, որ սերունդները երախտապարտութեամբ պիտի յիշեն քեզ:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԵՂԲ. ՎԱՐՈՒԺ

Եղբ. Վարուժ Գեորգեան ծնած է 1939ին, Պուրճ Համուտ: Կրթութիւնը ստացած է Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանը: Ապա նետուած է գործի ասպարէզ:

Իբրեւ գայլիկ, եղբ. Վարուժ Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին կ'անդամակցի 1948ին: Սկստակալ շարքերէ անցնելէ ետք, ան իր հետաքրքրութիւնները կ'ուղղէ դէպի մարմնամարզ:

1961ին մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Ս.ի աթլէթի ներկայացուցչական խումբին, որուն հետ ան կը մասնակցի Հ.Ս.Ը.Ս.ի միջ-մասնաճիւղային աթլէթիկ խաղերուն, Գահիրէ:

Եղբ. Վարուժ Հ.Ս.Ը.Ս.ական աթլէթի շապիկը պատուով կը կրէ 1961-1974: Իբրեւ վարպետ գունդ նետող, ան Լիբանանի ախոյեան կը հանդիսանայ 1964ին, 1965ին, եւ 1966ին:

Աթլէթ ըլլալու կողքին, 1968էն սկսեալ ան մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի աթլէթիկ յանձնախումբին, որուն ատենապետութիւնը եւ մարզիկներուն մարզումը ձեռնհասօրէն կը կատարէ 1972-1993, այնուհետեւ եւ մինչեւ մահ հանդիսանալով յաջորդական Շրջանային Վարչութիւններուն ներկայացուցիչը աթլէթի յանձնախումբին մօտ, իբրեւ Շրջանային Վարչութեան անդամ կամ լիազօր ներկայացուցիչ:

Եղբ. Վարուժ կը ստանձնէ նաեւ վարչական գա-

նագան պաշտօններ: 1974-1983 ան մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան, 1980-1983 վարելով ատենապետութեան պաշտօն: 1988-1993, 1996-2000 եւ 2006-2008, հինգ շրջան ան կ'ընտրուի Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ: 1991ին եւ 1999ին կը մասնակցի Հ.Ս.Ը.Ս.ի Ե. եւ Է. Պատգամաւորական ժողովներուն:

Երկարամեայ աթլէթի իր փորձառութեամբ, եղբ. Վարուժ 1982էն սկսեալ Հ.Ս.Ը.Ս.ի աթլէթիկ խումբին ներկայացուցչութիւնը կը կատարէ Լիբանանի աթլէթիկ ֆետերասիոնին մօտ: 1993ին ան կ'ընտրուի ֆետերասիոնի անդամ: Այնուհետեւ ան կը վերընտրուի 4 անգամ (1997, 2001, 2005, 2009)՝ ֆետերասիոնի փոխ նախագահի պաշտօնով: Այդ հանգամանքով ան աթլէթիկ Լիբանանի ազգային խումբը կը գլխաւորէ արաբական եւ միջազգային զանազան մրցաշարքերու:

Անուսնացած էր եւ ուներ երկու աղջիկ.- Մարիա եւ Ռիթա Գեորգեաններ, երկուքն ալ Լիբանանի երկար տարիներու ախոյեաններ՝ սկսաւառակ, նիզակ եւ գունդ նետելու իրենց դասակարգի մրցումներուն:

Վաստակաշատ իր նուիրումին համար, Նոյեմբեր 2008ին, եղբ. Վարուժ Հ.Ս.Ը.Ս.ի 90ամեակին առիթով կը պարգևատրուի «Ծառայութեան» շքանշանով:



ԲԱՐԵԿԻՐԹ ԸԼԼԱՆՔ

ՍԵՂԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ



Մարդ պէտք է ուտէ ապրելու համար, եւ ոչ թէ ապրի ուտելու համար:

Այս իմաստուն խօսքը միշտ պահեցէք ձեր մտքին մէջ: Մենք կը տարբերինք անասուններէն, որոնք կերակուրին առջեւ ամէն ինչ կը մոռնան, նոյնիսկ իրենց տէրը, իսկ մարդը կերած-խմած ատեն միշտ կը յիշէ եւ շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ՝ իրեն պարգեւած բարիքին համար:

ՈՒՏԵԼՈՒ ԿԱՊՈՒԱԾ ՈՍԿԻ ԽՐԱՏՆԵՐ

- Ուտել, խմել առանց ձայնի:
- Փոքր ախորժաբերները կ'ուտեն անձեռոցիկով, իսկ մեծերը՝ դանակով ու պատառաքաղով:
- Հրամցուած պնակի մը մէջ դրուած կտորին լաւագոյնը չեն ընտրեր, այլ՝ կ'ընտրեն այն կտորը, որ մօտ է մեզի:
- Տաք ուտելիքները եւ խմելիքները չեն փչեր:
- Ճաշի նստելէ առաջ պէտք է ձեռքերը լուալ:
- Մէկ պնակի մէջ զանազան կերակուրներ իրարու չեն խառներ:
- Բան մը խմելէ առաջ պէտք է սրբել բերանը:

- Լաւ նստէ սեղան, աթոռը քաշած ժամանակդ աղմուկ մի՛ հաներ:


ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ԱՐԵՒՈՒ ՁԵՐՄՈՒԹԻՒՆԸ

Տաքութիւն ստանալու համար մարդիկ կը դիմեն զանազան միջոցներու: Այդ միջոցներէն մէկն ալ արեւու լոյսը եւ ճառագայթները օգտագործելն է:

Այն տունները, որոնք արեւուն լոյսը կ'օգտագործեն, արեւէն տաքութիւն կը ծծեն, կ'ամբարեն եւ տան պէտք եղած մասերուն կը բաժնեն:


Արեւուն տաքութիւնը կը գործածուի տունը տաքցնելու եւ տաք ջուր ունենալու համար:



Արեւու ջերմութիւնը օգտագործող տուններու տանիքը կը գտնուին արեւընկալ քառանկիւնաձեւ մակերեսներ, որոնք դրուած կ'ըլլան քով-քովի, անկիւնը 60 աստիճանով: Իւրաքանչիւր մակերես ունի երկու խաւ. տակի խաւը մուժ գոյն կ'ըլլայ, որովհետեւ մուժ գոյները աւելի տաքութիւն կը ծծեն, իսկ վրայի խաւը թափանցիկ ապակի կ'ըլլայ:

Այս սարքաւորումը կ'ունենայ երեք տեսակ խողովակներ: Տաք ջուրի խողովակները կարմիր կ'ըլլան, պաղ ջուրիները՝ կապոյտ, իսկ տաք օդի անցքերը՝ դեղին:





Երկու խաւերուն միջեւ գտնուող խողովակներուն մէջ ջուրը կը տաքնայ եւ կը հոսի դէպի տան ներքին խողովակները: Ապա, տաք ջուրը կը հաւաքուի տաքութիւն ամբարող տակառին մէջ: Տակառները պաշտպանուած կ'ըլլան այնպէս մը որ իրենց տաքութիւնը պահպանեն:

Վերջապէս, տաք ջուրի խողովակները կ'անցնին հովահարի մը վրայէն: Այս հովահարին փչած օդը խողովակներուն դաշելով կը տաքնայ եւ դեղին անցքերուն մէջէն անցնելով կը տաքցնէ տունը:



Ջուրը միշտ շարժուն վիճակի մէջ կ'ըլլայ: Պաղած ջուրը ջրամբարին վարի մասը կը վերադառնայ եւ յետոյ տանիք կը բարձրանայ, որպէսզի անգամ մը եւս տաքնայ արեւու ջերմութենէն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՆԱՊԱՍՏԱԿ

Այն ապաստակ իմ սիրուն,
Շուտ վերջ տուր այս խաղերուն,
Չես մը տեսներ դուն միթէ,
Որսորդը քեզ կը դիտէ,
Փախիր, փախիր սիրելիս,
Չըլլայ որ թէ զարնուիս:

Նապաստակը խորտիկ,
Աչքերը դարձան բոլորտիք,
Եւ ականջները բարակ,
Տնկեց փախաւ շատ արագ,
Որսորդն ուղղեց հրացան,
Գնդակն ահա պայթեցաւ:



ԿԵՆԴԱՆԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Նապաստակները կը պատկանին ստնաւոր կենդանիներու ընտանիքին: Անոնք ընտանի կենդանիներ են եւ կը բաղկանան զանազան տեսակներէ:

Նապաստակներուն կշիռը 2-7 քլկ. կ'ըլլայ: Անոնք կ'ապրին 7-10 տարի: Կ'ապրին առանձին կամ խումբով: Կ'ընտելանան ուրիշ կենդանիներու հետ: Կրնան ապրիլ ազատ կամ վանդակի մէջ, բայց մէկ վանդակի մէջ երկու արու նապաստակ պահելը կարելի չէ:

Նապաստակները խոտակեր կենդանիներ են. անոնք ընդհանրապէս ստեպղին կ'ուտեն. կրնան ուտել նաեւ հատիկ, եգիպտացորէն կամ թարմ կանաչեղէն, ինչպէս՝ հազար: Նապաստակները կը սիրեն ջուր խմել. օրական մօտաւորապէս անոնք 4 լիթր ջուր կը խմեն:



Նապաստակները կը սիրեն ապրիլ հանդարտ մթնոլորտի եւ գաղջ կլիմայի մէջ, 18-20 աստիճանով:

Էգ նապաստակները 30-32 օրէն կը բերեն 7-8 ձագեր, որոնք կը ծնին առանց մորթի. անոնք իրենց ապաստանը կը շինեն յարդերու մէջ:

Նապաստակները, ինչպէս մնացեալ ընտանի կենդանիները, կը ճանչնան եւ կը փնտռեն իրենց հոգատարը:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է ի՞նչ է:
Ո՞վ է ան, որ ծովուն վրայ կը կանգնի առանց թրջուելու:
(Պատասխանը՝ յաջորդի: Նախորդ հանելուկին պատասխանն էր Սլաքներ):



ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Գերմանիոյ ֆուլթպոլի կազմերէն:
- Դատարան - Կրկնուած ձայնաւորներ - Ճոկան:
- Նստած դիրքով - Սերունդ:
- Ցաւի ճիչ - Անգլիացի փիլիսոփայ եւ թուաբանագէտ (1642-1727) - Լեցուն:
- Հայ թագաւոր - Կրտուած ոչխար - Արսէն Երկաթի ծննդավայրը:
- Դէպի օտարութիւն - Եզերք - Տեղափոխուած տառեր:
- Ասիական երկիր - Նոնաքար:
- Մեծ մայր - Տեղափոխուած գիրեր - Զայնակից տառեր:
- Իրաքեան լրատու գործակալութիւն - Պոչ - Տարածքի միաւոր:
- Տեղափոխուած գիրեր - Իրերայաջորդ տառեր:
- Յայտարարութիւն - Փոքրացնող մասնիկ - Հարցական դերանուն:
- Կրկնուած բաղաձայններ - Պրագիցի ֆուլթպոլիստ - Սպանացի դեղանկարիչ:
- Ինտոնեզիոյ կղզիներէն - Հ.Մ.Ը.Մ.ական նախկին մամուլէն - Պոչ:
- Աստուած՝ Հին Կտակարականին մէջ - Վէրքի կեղեւ - Ստացական ածական:
- Թթու հոյզով պտուղ - Բաժին:
- Դրկից գիրեր - Շաղկապ - Օձի գալար:
- Գութան - Ոխ - Բազմութիւն:
- Թրջուիլ - Աման - Ոտանաւորի վերջավանկ:
- Ածականակերտ մասնիկ - Զկարդացուելիք:
- Մթութիւն - Արեւելեան տիտղոս - Բուն:

ՌԻՂՂԱՀԱՅԵԱՑ

- Պուլկար միջագոյն յառաջապահ:
- Զուան - Ճօշան - Քիմիական նիւթ մը:
- Հայկական դիցարանի գերազոյն աստուածը - Միայն - Դէ՛հ:
- Հրուշակ - Լիբանանի պանդոկներէն:
- Կրկին - Ածականակերտ մասնիկ - Ընտիր:
- Աստուած - Մի - Յուցական ածական - Մանելիք - Յուցական ածական:
- Թեթեւ մարմնամարզի տասը ձեւերը - «Յորմիւլա 1»ի աւատրալիացի մրցավարորդ:
- Վարժ - Հորովակերտ մասնիկ - Ֆրանսական քաղաք - Կրկնուած տառեր:
- Շաղկապ - Արթուն հսկող - Հայ գուսան:
- Եւրոպական մայրաքաղաք - Խեցի - Կոր ու յայն բրիչ:
- Մաղիամի թագաւորներէն - Հռոմէական դիցուհի - Այբուբենէն:
- Էմիլ Զոլայի երկերէն - Ազնուականի տիտղոս - Իրերայաջորդ գիրեր:
- Արօրի բռնատեղ - Շաղկապ - Մոհամէտի փեսան:
- Զրուցելիք - Երկասյրի շեղբով կարճ սուր - Ֆրանսական քաղաք:
- Ռուս թենիսիմուրն:

1																			
2																			
3																			
4																			
5	↓																		
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			

175 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐԻՄԻՐ

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				



Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՄԱՆԵՄ